

Գեղամ Բաղայան

ՎԱՆԻ ԷՅԱԼԵԹԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ (1548-1555 ԹԹ.)

Բանալի բառեր. Վանի էյալեթ, սանջակ կամ լիվա, հուքյումեթ (կիսանկախ իշխանություն), օջաքլըք, յուրդլուք, արաբատառ, բեյլերբեյ (փաշա), մելիք, մելիքություն:

Վանի էյալեթը ստեղծվեց Վան քաղաքի գրավումից անմիջապես հետո՝ 1548 թ.: Իբրահիմ Փեչևհին այդ առիթով գրում է. «(Բերդի) բեյլերբեյությունը շնորհվեց Չերքեզ-Իսքենդեր փաշային, որը Ստամբուլում Անադոլուի դեֆթերդարի պաշտոնն էր վարում»¹: Մեր կողմից առանձնացված ժամանակահատվածում Վանի էյալեթի մանրամասն վարչատարածքային բաժանումը, որպես կանոն, պահպանվել է խիստ սահմանափակ աղբյուրներում, որոնք շատ դեպքերում թերի կամ հակասական տեղեկություններ են հաղորդում: Վանը կենտրոնից առավել հեռու գտնվող էյալեթներից էր, որի տարածքի զգալի մասում, ինչպես նշել ենք, օսմանյան գերիշխանությունն ավելի շուտ ձևական բնույթ էր կրում: Այս առումով բավական երկար ժամանակ այն կայսրությանը ենթակա, բայց չյուրացված երկրամաս էր, ուր տեր ու տնօրեն էին գերազանցապես քուրդ ավատատերերը: Նրանց փոխհարաբերություններից էր շատ հաճախ կախված էյալեթի վարչական կառուցվածքը: Քիչ չեն այն դեպքերը, երբ առանձին վարչամիավորներ վերացել են «կլանվելով» ավելի հզոր հարևանների կողմից: Թուրք պաշտոնյաները հիմնականում մուտք չունեին «քրդական օրենքներով» և «քրդական սովորույթներով» կառավարվող հուքյումեթներ կամ սանջակներ (օջաքլըք, յուրդլուք), որտեղից էլ նրանց արձանագրած փաստերը շատ հաճախ հեռու էին իրականությունից: Ավելին, ձեռքի տակ եղած աղբյուրների համեմատական քննությունը ցույց է տալիս, որ 16-րդ դ. կեսերից մինչև 19-րդ դ. 40-ական թթ. ընկած ժամանակաշրջանի վարչական բաժանումն արտացոլող ցուցակները, կազմվել են սահմանափակ, որպես կանոն՝ մեկ կամ երկու, նախատրինակների հիման վրա, որն էլ լուրջ թերությունների և բացթողումների պատճառ է հանդիսացել: Խիստ կցկտուր են ավելի մանր վարչամիավորների՝ կազանների և նահիեների մասին եղած տվյալները (կարելի է ասել, որ հատուկենտ տեղեկություններից բացի մեզ ոչինչ հայտնի չէ)²: Մյուս կողմից լրացուցիչ դժվարություններ են ստեղծում նաև տեղանունների մի մասի՝ երբեմն անձանաչելի աղավաղումները, որոնք հետևանք են արաբատառ գրության առանձնահատկությունների և տասնամյակներով թուրքական աղբյուրների ձեռագիր մնալուն: Այս ամենով հանդերձ, մեզ հասու աղբյուրների շնորհիվ հնարավոր է եղել վերականգնելու Վանի էյալեթի 16-րդ դ. 2-րդ կեսի – 19-րդ դ. 1-ին կեսի վարչատարածքային ներքին բաժանումը և սահմանները: Ընդ որում, ներկա ուսումնասիրության մեջ անհրաժեշտ ենք համարել առանձնացնել երկրամասի վարչա-քաղաքական պատմության ամենավաղ՝ 1548-1555 թթ. ընդգրկող շրջանը: Նախ, թուրք-պարսկական պատերազմը դեռ շարունակվում էր, իսկ դա չէր կարող իր ազդեցությունը չթողնել նորաստեղծ էյալեթի ինչպես արտաքին՝ սահմանների, այնպես էլ ներքին վարչական կառուցվածքի վրա: Երկրորդ, երկրամասի հիմնական գծերով շուրջ երեք հարյուրամյակ պահպանված սկզբնական վարչատարածքային բաժանումը պայմանավորված է հենց այս ժամանակահատվածով: Բարեբախտաբար այն բավական մանրամասն ձևով պահպանվել է Էվլիյա Չելեբիի հայտնի աշխատու-

¹ «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հատոր Ա, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, Ե., 1961, էջ 29-30 (այսուհետև՝ ԹԱ-1): Հմմտ՝ Birken A., Die Provinzen des Osmanische Reiches, Wiesbaden, 1976, էջ 175: Pitcher D. E., An Historical Geography of the Ottoman Empire from the earliest times to the end of the sixteenth century, with detailed maps to illustrate the expansion of the Sultanate, Leiden, 1981, էջ 128:

² Այդ բացը հնարավոր է լրացնել միայն տպագիր աղբյուրների և թուրքական արխիվներում պահվող տվյալ ժամանակաշրջանի փաստաթղթերի համակողմանի ուսումնասիրությամբ, որը, հասկանալի պատճառներով, կապված է մեծ գիտուժի, ժամանակի, ինչպես նաև քաղաքական այլևայլ հարցերի հետ:

թյան 4-րդ հատորում (պայմանականորեն այն կոչել ենք «ընդարձակ» ցուցակ – Գ.Բ.)³: Կասկած չի կարող, որ հեղինակն այդ տեղեկությունները քաղել է 1654 թ. Վանում եղած ժամանակ՝ անմիջապես բեյլերբեյի դիվանից: Այդ տեսակետից դրանք ոչ միայն խիստ արժեքավոր են, այլև՝ եզակի: Նման կարգի այլ տվյալներ, ցավոք, մեզ չեն հանդիպել, բացառությամբ թերևս Սուլեյման 1-ինի (1520-1566) ժամանակակից Կոջա Նիշանջիի՝ Վանի էյալեթի վարչական բաժանմանը նվիրված թերի ցուցակի (պահպանվել է Քյաթիբ Չելեբիի «Ջիհան-Նյումայում»), որը, ի դեպ, առանձին դեպքերում լրացնում է նշանավոր ճանապարհորդի տեղեկությունները: Չպետք է մոռանալ նաև «Շարաֆ-նամեն», ուր նույնպես հանդիպում են հետաքրքրություն ներկայացնող փաստեր:

Էվլիյա Չելեբին, խոսելով սուլթան Սուլեյման 1-ինի կողմից Վանի բեյլերբեյի բանակի մարտակարգի մասին, հիշատակում է 4 հուլյունեթ (Բիթլիս, Հաքարի, Մահմուդի, Փինյանի)⁴ և 27 սանջակ (իր խոսքերով՝ 30): Թվարկվող վարչամիավորների հաջորդականության քննությունը ցույց է տվել, որ բանակի ձախ թևում⁵ խմբված էին էյալեթի հյուսիսային 12, իսկ աջում՝ հարավային 15 սանջակների իշխողները: Առաջին խմբի սանջակները դասավորված էին հետևյալ հաջորդականությամբ՝ لاموس - Lamus⁶, عادلجواز - Adilcevaz, ارجيش - Erciş, بارگیری (بارکیری) - Bargiri, بایزید - Bayezid, اچچه قعله - Akçekale, سوره کی - Suregi, قرقه جه قعله - Karacakale, اکراد ماکو - Ekrad-i Maku, ضیاءالدین - Ziyaeddin, اباغای < اباغای - Abağay/, شطاق - Şetak⁷:

Նշված սանջակներից որոշակի հայտնի է 8-ի տեղադրությունը: Ընդ որում, դրանց թվարկման հաջորդականությունը հնարավորություն է տալիս պարզելու նաև մյուսների տեղադրությունը: Անդրադառնանք դրանց ավելի հանգամանակից:

ա) Adilcevaz. Գավառի կենտրոն, հնագույն հայկական Արծկե բերդաքաղաքի արաբական անվանումն է, որը լայնորեն տարածված էր մահմեդական, այդ թվում՝ օսմանյան, միջավայրում⁸: Գրավում էր Վանա լճի հյուսիսարևմտյան ափը՝ հյուսիսում տարածվելով մինչև Սիփան լեռ (4058 մ) և Սարիսուի գոգավորություն: Հայկական միջնադարյան 16-17-րդ դդ. ձեռագրերի հիշատակարաններում այս վարչամիավորը, որպես կանոն, հիշատակվում է «Արծկոյ (Արծըկոյ, Արծկու) երկիր»⁹ կամ պատմական «Բզնու-նեաց երկիր»¹⁰ անուններով: Հանդիպում է նաև «երկիրն (գաւառն) Արծրունեաց» ձևը¹¹:

³ Այս հատվածը շարադրելիս արաբատառ տեղանունները համեմատել ենք վերջին շրջանում թուրք օսմանագետների պատրաստած լատինատառ հրատարակության հետ: Տե՛ս Evliya Çelebi-2, էջ 117: Լատինական տառադարձությունը տվել ենք ըստ ժամանակակից թուրքերենի ուղղագրության:

⁴ Վանի էյալեթի հուլյունեթների մանրամասն վերլուծությունը տե՛ս Բադալյան Գ., Վանի էյալեթի քրդական իշխանությունները, «Իրան-Նամէ», Ե., 1998, թիվ 2/3, էջ 23-37:

⁵ Ավանդաբար թուրքական բանակը բաժանվում էր 2 թևի՝ աջ և ձախ: Սա գալիս էր դեռ սելջուկյան նվաճումների ժամանակից, երբ օղուզա-թուրքմենական ցեղերն առաջ էին շարժվում որոշակի մարտակարգով՝ բաժանված աջ (բուզուք կամ բուզոք) և ձախ (ուչուք կամ ուչոք) թևերի: Տե՛ս Երեմեն Դ., Թուրքերի ծագումը, Ե., 1975, էջ 110:

⁶ Էվլիյա Չելեբիի գործի լատինատառ հրատարակությունում Muş-Մուշ, ինչը սակայն սխալ է, քանի որ չի բխում աշխարհագրական հաջորդականության տրամաբանությունից: Տես Evliya Çelebi b.Derviş Mehmed Zillî, Evliya Çelebi Seyahatnâmesi, IV Kitap, İstanbul, 2000, էջ 150:

⁷ [Evliya Çelebi], Evliya Çelebi seyahetnâmesi, cilt 4, İstanbul, 1314 (1896), (արաբատառ, այսուհետև՝ Evliya Çelebi): Հմնտ. «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հատոր 4 - «Թուրքական աղբյուրներ», գիրք Գ: Էվլիյա Չելեբի, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա. Խ. Սաֆրաստյանի, Ե., 1967, էջ 245-246 (այսուհետև՝ ԹԱ-3):

⁸ Ուշագրավ է, որ տեղի հայերի շրջանում գավառը հայտնի էր Ալջավազ (<Ադիլջևազ) անունով, այն դեպքում, երբ բուն կենտրոնը պահել էր պատմական ձևը (բարբառային՝ «Արծըկէ»): Այս տեղեկությունը տարիներ առաջ մեզ է հաղորդել հայ անվանի հնագետ Սանդրո Սարդարյանը, որն ինքն էլ այս տարածաշրջանից էր (Գ. Բ.):

⁹ Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր 1616, թ. 326բ (այսուհետև՝ ՄՄ և ձեռագրի համարը): «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն առաջին (1401-1450 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Ե., 1955, էջ 434 (այսուհետև՝ ԺԵ-Ա): «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Գ (1641-1660 թթ.), կազմեց Վ. Հակոբյան, Ե., 1984, էջ 29, 442, 444 (այսուհետև՝ ԺԵ-Գ): Հմնտ. Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի, Ե., 1999, էջ 191:

¹⁰ ՄՄ 6273, թ. 232բ: Հմնտ. Թովմա Մեծոփեցի, էջ 60:

¹¹ Տե՛ս ԺԵ-Ա, էջ 137, 167: ԺԵ-Գ, էջ 850:

բ) Erciş. Հայկական Արձեշ տեղանվան թուրքերեն աղավաղումն է: Սանջակն ընկած էր Ադիլջևագ-Արծկեից արևելք և գրավում էր Վանա լճի հյուսիսային ափերից մինչև Ծաղկանց (Ալադաղ) լեռնաշղթան ընկած տարածքը, որը ներառում էր Ադի կամ Արձեշ (Զիլանաձոր օժանդակով) և Գայթիս (թրք.՝ Delicay) գետերի ձորահովիտները: Կենտրոնը հայկական հնագույն Արձեշ բերդաքաղաքն էր՝ հայ միջնադարյան մշակույթի նշանավոր օջախներից մեկը, որի անունով մեր ձեռագրական հիշատակարաններում վարչամիավորը կոչվել է «Արձիշոյ գաւառ» կամ «Արձիշոյ (Արձիշու, Արձշայ) երկիր»¹²: Սակայն 16-17-րդ դդ. հայ գրիչները, որպես կանոն, Արձեշը հիշատակում են երկու տարբերակով՝ վերևիսին զուգահեռ տալով նաև վերջինիս պատմական, եթե կարելի է ասել՝ ավելի «հայեցի», անվանաձևը, որը բխում է տեղում երբեմնի կառավարող համանուն նախարարական տոհմի անունից՝ «երկիրն Քաջբերունոյ (Քաջբերունու, Քաջբերունոյ)»¹³, «երկիրն(-ս) Քաջբերունեաց»¹⁴, նաև՝ «Քաջբերունեաց գաւառ»¹⁵: Ինչպես Արձեշը, այնպես էլ նախորդը՝ Ադիլջևագ-Արծկեն, նշված ժամանակահատվածում գտնվել են քրդական փազուկի ցեղի էմիրների իշխանության ներքո¹⁶:

գ) Bargiri. Հայկական Բերկրի տեղանվան պարսկերեն իմաստավորված աղավաղումն է, որը փոխանցվել է նաև օսմանցիներին: Գտնվում էր Արձեշից արևելք՝ լճի հյուսիսարևելյան ափամերձ հատվածում՝ ընդգրկելով Բանդիմահի (պատմ.՝ Առեստ կամ Բերկրի) գետի ստորին ավազանը՝ ներառյալ գետաբերանը: Սանջակի հյուսիսային սահմանը ձգվել է Այրիծորի (Արսորիկ, Ակսորիկ) փոքրիկ լեռնաշղթայի ջրբաժանով, իսկ հարավայինը հասել է Մարմետի (թրք.՝ Karasu) միջին գետահովիտ, Ախտասարի լեռներ¹⁷: Կենտրոնը համանուն բերդաքաղաքն էր (թրք.՝ Bargiri-kale)՝ վերոհիշյալ գետի ձախափնյակում: Հայկական աղբյուրներում Բերկրին բազմիցս հիշատակվում է հատկապես 15-րդ դ. հիշատակարաններում, ընդ որում, կրկնակ անվանաձևերով՝ «գաւառ (նահանգ, երկիր) Տարբերունի կամ Տարբերունոյ (հազվադյուտ՝ Տարբերունեաց), որ Բերկրի կոչի» անունով¹⁸: Նշենք, Տարբերունին գավառի հնագույն Առբերանի անվան յուրատեսակ իմաստավորումն է՝ թերևս Տուրուբերան (< Տաւրոյ բերան) տեղանվան ազդեցության ներքո¹⁹: Վարչամիավորը հիշվում է նաև «գաւառս Բերկրոյ» կամ ուղղակի՝ Բերկրի անվանաձևերով²⁰: Բերկրին մահմուդի քուրդ բեկերի կողմից կառավարվող օջաքլըք տիպի սանջակ էր²¹:

¹² ԺԵ-Ա, էջ 465, 484: «Ժ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ (1621-1640 թթ.), կազմեցին Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Ե., 1978, էջ 386 (այսուհետև՝ ԺԵ-Բ): Թովմա Մեծփեցի, էջ 37, 191:

¹³ «Ժ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն երրորդ (1481-1500 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Ե., 1967, էջ 401, 45, 441, 451, 463 (այսուհետև՝ ԺԵ-Գ):

¹⁴ «Ժ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն երկրորդ (1451-1480 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Ե., 1958 էջ 320, 435 (այսուհետև՝ ԺԵ-Բ): ՄՄ 6332, թ. 241բ:

¹⁵ ԺԵ-Գ, էջ 87, 130-131, 218, 334: Մանր ժամանակագրություններ, հտ. 1, էջ 126: Հմմտ. նաև՝ ՄՄ 6273, թ. 270բ. «յերկիրն Քաջբերունու, որ այժմ Արձեշ ասի (ընդգծումը մերն է - Գ.Բ.): Հիշատակարանը՝ 1571 թ.: Ի դեպ, բավական հաճախ հանդիպում է միայն «երկիրն Քաջբերունու (Քաջբերունեաց)» կամ «գաւառն Քաջբերունեաց» գրառումը: Տե՛ս ԺԵ-Գ, էջ 401, 405, 441, 451, 463: ԺԵ-Բ, էջ 320, 435: ՄՄ 6332, թ. 241բ:

¹⁶ Петрушевский И. П., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-начале XIX веках, Ленинград, 1949, էջ 141: Ի դեպ, Էվլիյա Չելեբիի մի ուշագրավ տեղեկությունից պարզվում է, որ նույն Սուլեյման 1-ինի օրոք, հավանաբար՝ 1550-1560-ական թթ., Արձեշի բերդը պաշտպանում էին բոսնիացի ու ալբանացի զինվորականները, որոնք քրդերին փաստորեն դուրս էին մղել կառավարման համակարգից (տե՛ս Evliya Çelebi, էջ 140):

¹⁷ Տե՛ս «Բերկրի-Աբադա» քարտեզ, մասշտաբ՝ 1: 280000.- Գ. Բադալեան, Վան-Վասպուրական ատլաս, Ե., 2015, էջ 14-15:

¹⁸ ԺԵ-Ա, էջ 213, 241, 256, 295, 321, 527: ԺԵ-Բ, էջ 381: ԺԵ-Գ, էջ 113, 121-122, 238, 364, 384:

¹⁹ Այս առումով հատկանշական է 1424 թ. գրված մի Շարակնոցի հիշատակարանում հանդիպող ձևը. «ի նահանգիս Առբերունի, որ այժմ Բերկրի կոչի» (տե՛ս ԺԵ-Ա, էջ 322):

²⁰ ԺԵ-Ա, էջ 338-339, 353: «Ժ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա (1601-1620 թթ.), կազմեցին Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Ե., 1974, էջ 183, 412 (այսուհետև՝ ԺԵ-Ա): «Մանր ժամանակագրություններ: XIII-XVIII դդ.», կազմեց Վ. Հակոբյան, հտ. 2, Ե., 1951, էջ 420, 496 ևն:

²¹ Evliya Çelebi, s. 150:

դ) Lamus. Վերոհիշյալ 3 սանջակները, որոնք, ինչպես տեսանք, տարածվում էին հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք, լիովին պարզում են էվլիյա Չելեբու ցուցակում առաջինը հիշվող վարչամիավորի տեղադրությունը: Թուրքական աղբյուրում հանդիպող տարբերակն արդյունք է տեղանվան արաբատառ գրության սովորական աղավաղման՝ *أموك* (Amuk) > *لاموس* (Lamus)²²: Ըստ այդմ, վարչամիավորը նույնանուն է 15-16-րդ դդ. Հայերեն ձեռագիր հիշատակարաններում հանդիպող «Ամուկ», «երկիր Ամկու» կամ «երկիր Գնունեաց (իմա՝ Գնունիք - Գ. Բ.), որ է Ամուկ» գավառի հետ²³, որը գտնվում էր Բերկրուց անմիջապես հարավ: Ընդ որում, դատելով Առաքել Դավրիժեցունի ուշագրավ տեղեկությունից՝ սանջակի կազմում են գտնվել լճի հյուսիսարևելյան և արևելյան ափամերձ շրջանները՝ Բազի փոքրիկ թերակղզուց մինչև Մարմետ-Կարասուի գետաբերանը²⁴: Վերջինիս կենտրոնը ռազմավարական մեծ կարևորություն ունեցող հնագույն Ամյուկ (Ամուկ) բերդաքաղաքն էր՝ Վանա լճի ափին բարձրացող համանուն լեռնազանգվածի գագաթին: Ավելի ուշ միացվելով Վանի Կենտրոնական սանջակին (թրք.՝ *paşa-sancağı*) այս վարչամիավորը վերանվանվեց Թիմար:

ե) Bayezid. Ընկած էր Ծաղկանց-Ալադաղ և Հայկական պար լեռնաշղթաների միջև՝ ներառելով Գայլատու (թրք.՝ *Balik Gölü*) փոքր լճի ավազանը: Չենք բացառում, որ սանջակի մեջ էր մտնում Արածանի-Մուրատ գետի (Արևելյան Եփրատ) ակունքների շրջանում գտնվող Դիադինի (պատմ. Տատենոն) գավառակը: Կենտրոնը ռազմավարական մեծ կարևորություն ունեցող Բայազետ (պատմ.՝ Դարինք, Դարեւնից բերդ) բերդաքաղաքն էր: Պաշտոնական փաստաթղթերում այս սանջակը որպես կանոն նշվում է *Kale-i Bayezid* կամ *Bayezid-Kalesi* ձևերով²⁵:

զ) Akçekale, է) Suregu²⁶ և ը) Karacakale. Նշված 3 սանջակների տեղադրությունը կապված է որոշակի դժվարությունների հետ: Սկզբնապես մեզ թվում էր, թե դրանք պետք է փնտրել Վանի էյալեթի հարավում, ուր հանդիպում են Ալչակալե կամ Կասրիկ (Պաշատ լեռից հարավ) և Կարաջակալե (Կարահիսար՝ Ղոթուր-չայի վերին հոսանքի շրջանում) բերդերը: Սակայն այդ դեպքում անորոշ էր մնում միջանկյալ հիշվող *Suregu*-ի տեղադրությունը, քանի որ նման տեղանուն այդ շրջանում պարզապես չկա: Մյուս կողմից, ձախակողմյան բոլոր սանջակները, բացառությամբ մեկի (*Şetak*), ինչպես արդեն նշել ենք, գտնվել են էյալեթի հյուսիսում, ընդ որում՝ դրանց թվարկումն ընթանում է որոշակի աշխարհագրական հաջորդականությամբ: Մեր կարծիքով հենց այս փաստն էլ տալիս է հարցի պատասխանը: Ինչպես ցույց տվեցինք, առաջին 5 սանջակները տեղադրվում են հարավից հյուսիս: Դրանց հետևում են քննարկվող վիճելի 3 սանջակները, որոնց հաջորդող մյուս 3-ի տեղադրությունը նույնպես որոշակի է և կասկածներ չի հարուցում: Ընդ որում, դրանք արևելքից և հարավից սահմանակից էին Բայազետին: Այս փաստերը մեզ թույլ են տալիս *Akçekale*, *Suregu*, *Karacakale* սանջակները փնտրել Հայկական պարից հյուսիս՝ Արաքսի և վերջինիս կարևոր վտակներից մեկի՝ Ախուրյանի ավազանում: Ալչակալեի տեղադրությունը լիովին ճշտվում է ձեռագրական մի փոքրիկ, բայց խիստ կարևոր և հազվագյուտ նյութով, որը կրում է «Ամենայն բերդորայք, որ կան յայսկոյս և յայնկոյս Երասխայ մեծի գիտոյն» վերտառությունը: Ներկայացնում ենք քննարկվող բերդին նվիրված հատվածը. «Ի վեր, քան զնա (Սուրմարի - Գ. Բ.) **Աղջաղալէն է, ի մէջ երկուց գետոցն Ախուրանի և Երասխայ խառնուածին...**»²⁷: Ըստ այդմ, Ալչակալե (Աղջաղալա) բերդը համապատասխանում է պատմական Երվանդա-

²² Հանդիպում է նաև տեղանվան Ամիկ ձևը (արաբ.՝ *عميق*): Տե՛ս *Evliya Çelebi*, էջ 152:

²³ ԺԵ-Բ, էջ 39: ՄՄ 6273, թ. 159, 271: ՄՄ 4515, թ.267, 509: «Մանր ժամանակագրություններ», հտ. 2, էջ 228-229:

²⁴ «Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիժեցոյ», Վաղարշապատ, 1884, էջ 418. «Այր ոմն որում անուն էր Սիրուն, և էր սա յաշխարհէն Վասպուրականի ի գաւառէն որ այժմ ասի Ամուկ, ի գեղջէն որ կոչի Ալիւր» (ընդգծումները մերն են - Գ. Բ.):

²⁵ 16-րդ դ. մի հայերեն հիշատակարանում հիշվում է «Բիագդի բերդ» անունով (տե՛ս ՄՄ 6273, թ. 246):

²⁶ Էվլիյա Չելեբիի երկի լատինատառ տեքստում՝ *Şureger* (էջ 150):

²⁷ Տե՛ս ՄՄ 2180, թերթ 417ա: Ալչակալե-Աղջաղալան հիշատակում է նաև Առաքել Դավրիժեցին՝ նույնացնելով այն Երվանդակերտի հետ [նույն տեղում, էջ 26. «(Շահ Աբասը) եկն յԵրուանդակերտն հին, որ այժմ ասի Աղջաղալայ»]: Հմմտ. էջ 29, 60:

շատի, ավելի ճիշտ՝ վերջինիս միջնաբերդի հետ: Ամենայն հավանականությամբ սանջակն ընդգրկել է մինչև Հայկական պար ընկած շրջանը՝ ներառյալ նաև Կողբի աղահանքերը: Ի դեպ, 18-րդ դ. 1-ին քառորդին օսմանյան հերթական նվաճման հետևանքով վերստեղծված Երևանի էյալեթում Ալջակալան (Աղջաղալա) դարձյալ առանձին սանջակի կենտրոն էր²⁸, ինչը ցույց է տալիս նրա ունեցած կարևոր ռազմավարական նշանակությունը:

Ավելի մեծ դժվարությունների հետ է կապված հաջորդ սանջակի՝ Suregi-ի թե՛ անվան և թե՛ տեղադրության ճշգրտման հարցը: Եվլիյա Չելեբին նույն 4-րդ հատորում այն՝ այս անգամ Şork/g/er անվանումով, հիշատակում է Վանի էյալեթի՝ իր ժամանակի վարչական բաժանմանն անդրադառնալիս²⁹: Անմիջապես նշենք, որ Suregu-ն վերջին ձևի աղավաղումն է, որն առաջացել է արաբական س (sin) – ش (shin) և ر (ra) - و (wau) տառերի հաճախակի հանդիպող շփոթից, ինչը, ի դեպ, ենթադրում է նաև شوره کر (Şoreger կամ Şureger) տարբերակը: Հետևաբար քննարկվող հատվածում առաջարկում ենք հետևյալ տեղանունը սրբագրել Şoreger, որը Շորագյալի (պատմ.՝ Շիրակ) տարբերակներից մեկն է³⁰: Ցավոք, տվյալների պակասը թույլ չի տալիս հստակ պատկերացում կազմելու այս սանջակի սահմանների մասին: Անկասկած, նրա մեջ է մտել Ախուրյանի ձախափնյակը՝ Արևմտյան Շիրակը, որի կենտրոնը Շորագյալ կամ Շորեգեր (այժմ՝ Բաշ-Շորագյալ) բերդաքաղաքն էր: Նույնը, սակայն, չի կարելի պնդել գետի ձախափնյակի համար (Արևելյան Շիրակ), թեև չի բացառվում, որ այն նույնպես ժամանակավորապես եղել է սանջակի կազմում: Տվյալներ այդ մասին պարզապես չկան:

Վերջապես, 3-րդ՝ Karacakale սանջակը, տեղադրել ենք Արաքսի աջ ափին գտնվող Կարակալե կամ Ղարաղալա բերդի շրջանում: Թուրքերեն kara և karaca բառերն ունեն նույն իմաստը՝ «սև», «սևագույն», «մուգ», «թուխ» ևն³¹: Ուստի բերդը կարող էր կոչվել նաև Կարաջակալա (ամենայն հավանականությամբ՝ օսմանյան տարբերակը)³²: Մեր կարծիքով, այս սանջակն ընդգրկել է Արաքս գետի և Հայկական պար լեռնաշղթայի միջև ընկած պատմական Մասյացոտն գավառի տարածքը:

Ենթադրելի է, որ վերոհիշյալ երեք սանջակների Վանի էյալեթի կազմում հայտնվելը պայմանավորված էր փոփոխական հաջողություններով ընթացող պատերազմական գործողություններով: Թշնամի մի կողմը, նվաճելով որևէ տարածք, ստիպված էր լինում հակառակորդի հաջող ռազմական գործողությունների հետևանքով բավական արագ թողնել այն³³: Ըստ երևույթին, ստեղծված անկայուն վիճակն էլ ստիպել էր օսմանցիներին Հայկական պարից հյուսիս նվաճած առանձին տարածքներ ժամանակավորապես ընդգրկել նորաստեղծ Վանի էյալեթի մեջ: Ի դեպ, հնարավոր է, որ դա արվել էր որոշակի ռազմավարական նպատակով՝ հզորացնելու մերձռազմաձևակատային գոտին վերահսկող Վանի փաշայի ռազմական ուժը: Վերջնական չհամարելով մեր տեսակետը՝ ավելացնենք, որ Քյաթիբ Չելեբիի մի վկայություն, ըստ որի Վանի էյալեթը հյու-

²⁸ Փափագյան Հ., Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի դիվանական վավերագրերը.- «Պատմա-բանասիրական հանդես», Ե., 1984, թիվ 3 (106), էջ 202, 208-209:

²⁹ Evliya Çelebi, s. 177. Հմմտ. ԹԱ-3, էջ 243: Հեղինակը նույն սանջակը հիշատակում է նաև 1-ին հատորում «Շներկեր» (նույն شوركور մեկ այլ տարընթերցումը: Տե՛ս ԹԱ-3, էջ 32): Չելեբիի մյուս հատորների բնագիրը ձեռքի տակ չունենալով՝ օգտագործել ենք հայերեն թարգմանությունը:

³⁰ Նույն տեղում, էջ 123: Հմմտ. Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն առաջին, հտ. Ա, Վենետիկ, Ս.Ղազար, 1806, էջ 121 («Շորէկեր»): Կարծում ենք, այս ձևը հանգում է Շիրակ տեղանվան միջին հայերենով «Շիրակեր» հոգնակիին, քանի որ, ինչպես հայտնի է, գավառն Ախուրյան գետով բաժանվում է 2 հատվածի՝ արևելյան և արևմտյան:

³¹ Տե՛ս «Турецко-русский словарь», М., 1977, стр. 511-512: Հմմտ. արդեն քննարկված Կարահիսար տեղանվան Կարաջակալա տարբերակը: Ընդ որում, hisar (حصار) և kale (قلعه) բառերը նույնպես համարժեք են և ունեն «բերդ», «ամրոց» նշանակությունը (նույն տեղում, էջ 409, 500):

³² Հմմտ. Արաքսի հարավային ափին գտնվող Ղարաղաղ (Կարաղաղ) գավառի Կարաջաղաղ անվանումը (տե՛ս „Tadhkirat Al-Mulūk. A Manual of Safavid Administration (Circa 1137-1725)”, translated and explained by V. Minor, London, 1943, էջ 100):

³³ Այսպես, հայտնի է, որ նույնիսկ 1550-1551 թթ. օսմանցիները չէին ամրապնդվել Կարսի շրջանում, քանի որ այն դեռ գտնվում էր կզըլբաշների ձեռքում (տե՛ս՝ Նաջարյան Հ. Խ., Թուրք-իրանական հարաբերությունները 16-րդ դ. ու 17-րդ դ. առաջին կեսին և Հայաստանը, Ե., 1961, էջ 106):

սիսում սահմանակից էր Կարսին և Չլդըրին³⁴, այնուամենայնիվ ավելորդ անգամ հաստատում է մեր վերոհիշյալ տեսակետը: 1555 թվականից հետո քննարկվող 3 սանջակները վերջնականապես հանվեցին էյալեթի կազմից: Ակջակալեն (Աղջաղալա) և Կարաջակալեն (Ղարաջաղալա-Ղարաղալա) անցնելով Պարսկաստանին՝ ընդգրկվեցին Չուխուր-Սա'ադի բեգլարբեգության մեջ: Շորեգերը (Արևմտյան Շորագյալը), որն Ամասիայի պայմանագրով մտնելու էր սպառազնականացված գոտու մեջ, 1579-1580 թթ. անցավ նորաստեղծ Կարսի էյալեթին³⁵: 17-րդ դ. այն այլևս Վանի էյալեթի կազմում չէր, և այս հարցում էվլիյա Չելեբին սխալվում է: Պետք է կարծել, որ, ձեռքի տակ ունենալով տարբեր ժամանակաշրջանների ցուցակներ, հեղինակը ազատորեն՝ առանց լուրջ համեմատության, լրացրել է դրանք՝ ավելացնելով բացակայող սանջակները³⁶:

թ) Ekrad-i Maku. Գրավում էր Ջանգյամար կամ Մակու գետի (պատմ.՝ Տղմուտ) ավազանը՝ համապատասխանելով պատմական Վասպուրական աշխարհի նշանավոր Արտագ գավառին: Կենտրոնը Մակու բերդաքաղաքն էր: Ամենայն հավանականությամբ, այս սանջակը 16-րդ դ. ունեցել է բավական ընդարձակ տարածք՝ արևմուտքում Վասպուրականի (Կոթուրի) լեռնաշղթայից մինչև արևելքում Արաքս: Նշված ժամանակաշրջանում Մակուն պատկանում էր մահմուդի քրդական ցեղի ճյուղերից մեկին, որտեղից էլ՝ սանջակի անվանումը (արաբ.-պրսկ.՝ «Մակվի քրդեր»)՝³⁷:

ժ) Ziyaeddin. Ընկած էր Մակվից հարավ Աղջայ (պատմ.՝ Ճուաշ) և Ղոթուր-չայ (Կոթուր-չայ, պատմ.՝ Կարմիր-գետ) գետերի ջրկիցի շրջանում: Այս առումով սանջակը նույնանուն է Չորսի գավառի հետ, որի կենտրոնը համանուն ավանն էր (պատմական Ճուաշ կամ Ճուարշ ավանը Վասպուրականի Ճուաշռոտ գավառում)³⁸: Ամենայն հավանականությամբ, նշված ձևն այս սանջակի օսմանյան պաշտոնական տարբերակն էր և որոշակիորեն պահպանվել է Աղջայի ափին գտնվող Կարազիադին (Ղարազիադին) բնակավայրի անվան մեջ: Զիյաեդդին-Չորսը ևս ենթակա էր մահմուդիներին³⁹:

ժա) Abağa/y/. Գրավում էր նշանավոր Աբաղայի դաշտը (պատմ.՝ Մարդաստան)՝ Վասպուրականի (Կոթուրի) և Ծաղկանց-Ալադադի լեռնաշղթաների միջև, Բերկրուց արևելք: Կենտրոնը համանուն բերդաքաղաքն էր՝ Թոնդրակ (Թանդուրեկ) հրաբխի հարավային ստորոտին, Բանդիմահու (պատմ.՝ Առեստ կամ Բերկրի) գետը սկզբնավորող Սողուկ-սուի (Սավուղ-սուի) ձախ ափին⁴⁰:

ժբ) Şetak. Հայերեն Շատախ: Այս գավառն ընկած էր Վանա լճից հարավ-արևելք և ընդգրկում էր Արևելյան Տիգրիս կամ Բոհտան (պատմ.՝ Ջերմ) գետի վերին ավազանը (այդ հատվածում՝ Շատախի ջուր)՝ վերջինիս մի շարք գետահովիտներով: 15-17-րդ դդ.

³⁴ Kâtib Çelebi, Cihan-nüma, Istanbul, 1144 (1732), (արաբատառ). s. 411: Ինչպես հայտնի է, հեղինակն օգտագործել է տարբեր ժամանակների աղբյուրներ, և մեր կարծիքով՝ վերոհիշյալ փաստն արտացոլում է քննարկվող ժամանակահատվածում առաջացած իրավիճակը:

³⁵ Birken, նշվ. աշխ., էջ 170:

³⁶ Հարկ է նշել, որ նույն պատճառով Շորեգեր (Շորագյալ) սանջակը Վանի էյալեթում հիշատակում է նաև Այնի-Ալի էֆենդին (1602 թ.: Տե՛ս Birken, էջ 180: Ցավոք, բնագիրը չունենալով՝ ստիպված էինք օգտվել երկրորդ աղբյուրից): Նույն սխալը կրկնել է նաև Փ. Ռիկոն (Ռայկոտը), որը սանջակը հիշում է Senurghuil աղավաղված ձևով: Ի դեպ, հեղինակը որոշակիորեն նշում է, որ օգտվել է «կայսերական ցուցակներից և մեծ վեզիրի մատյաններից» („Imperial Rolls and Registers of the Grand Signior“: Տե՛ս Rycaut, P., The Present State of the Ottoman Empire, Westmead, Farnborough, Hants, England, 1972, էջ 177 (Լոնդոնում 1668 թ. լույս տեսած գրքի վերատպությունը)): Յ. Ֆոն-Համմերը, օգտվելով նույն աղբյուրից, տալիս է սանջակի սրբագրված ձիշտ անվանումը՝ Schoregil (տե՛ս Des Osmanischen Reichs Staatsverfassung und Staatsverwaltung, Hildesheim, 1963, էջ 262 (Վիեննայում 1815 թ. հրատարակված գրքի վերատպությունը)):

³⁷ Петрушевский, նշվ. աշխ., էջ 129:

³⁸ Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչական-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա (արևմտյան և հարավային աշխարհներ), Ե., 2001, էջ 367:

³⁹ Петрушевский, նշվ. աշխ., էջ 129:

⁴⁰ Ինձիճեան, նշվ. աշխ., էջ 157-158, 167: 19-րդ դ. վերջին – 20-րդ դ. սկզբին այս բերդաքաղաքի ավերակները դեռ պահպանվել էին և կոչվում էին Չոբան-աղա կալեսի կամ Խրաբ-կալե (իմա՝ «ավերակ բերդ»): Տե՛ս ոռուսական 5 վերստանոց քարտեզի Դ-9 պլանշետ: Հմմտ. „Копия турецкой карты Азиатской Турции, изданной в масштабе 1:200 000 в 1330 году Гиджры, т.е. в 1911-12 годах“, [Тифлис], 1915-17, масштаб 1:210 000, III-17 պլանշետը (այսուհետև՝ Копия և համապատասխան պլանշետի համարը):

հայկական ծեռագրական հիշատակարաններում այս վարչամիավորը հանդիպում է «երկիրն Շատխոյ» կամ «Շաթխոյ գաւառ» անուններով⁴¹: Կենտրոնը համանուն բերդաքաղաքն էր՝ Հայկական Տավրոսի հարավային ճյուղավորումներից մեկին բարձրացող Գլուլական (Գյուլլուական) լեռան ստորոտին⁴²: Անհասկանալի է միայն, թե ինչու է սանջական ընդգրկվել Վանի բեյլերբեյի բանակի ծախ թևում (տրամաբանականը վերջինիս հակառակ կողմում լինելն էր): Սահմանակցելով Հաքարիի քրդական հզոր հուլյունեթին՝ Շատախն ընդունել էր վերջինիս գերիշխանությունը և 17-րդ դարից օսմանյան ցուցակներում որպես առանձին վարչամիավոր այլևս չի հանդիպում (մինչև 19-րդ դ. առաջին կեսը)⁴³: Սակայն Արևմտյան Հայաստանի վարչական պատմության մեջ այն գրավում է առանձնահատուկ տեղ: Շատախը Վանի էյալեթի տարածքում պահպանված առավել ուժեղ հայկական կիսանկախ իշխանություններից մեկն էր, որը կառավարում էին հայ մելիքները:

Աջաթևյան կամ հարավային սանջակներն «ընդարձակ» ցուցակում թվարկված են հետևյալ հաջորդականությամբ՝ اسپايرد - Ispayird, شیروی - Şervi, زريقى - Zeriki, كارنى - Kârni, هیرون - Hirun, کارکار - Kârkâr, اغاکیس - Ağakis, کسان - Kesan, مکث - Müküs, بردع - Berde՝ կամ Berda՝, لادیک - Lâdik, اوزہ جیک - Özecik, داله کرر - Dalegirer, بنی قطور - Beni Kotur⁴⁴:

Սակայն այս ցուցակն ամբողջական չի կարելի համարել: Ղա պարզվում է նույն հատորում հանդիպող Էվլիյա Չելեբիի այն հազվագյուտ տեղեկությունից, ըստ որի պատմական Պարսկահայքի տարածքում ձևավորված քրդական մի քանի այլ «հուլյունեթներ» 1548-1555 թթ. նույնպես եղել են Վանի էյալեթի կազմում: Հեղինակը հիշատակում է նմանատիպ հինգ վարչամիավոր՝ بنی قطور - Beni Kotur, بیره دوسی - Biredusi (Piredusi), جولانى - Colani, دومدمی - Dümümü, دنبولی - Dübülü կամ Dünbüli⁴⁵: Դրանցից միայն մեկն է հանդիպում «ընդարձակ» ցուցակում (Beni Kotur), իսկ մյուս չորսը մեզ անհայտ պատճառներով բացակայում են: Թուրք ճանապարհորդի տվյալները զգալիորեն լրացնում է նաև մեր կողմից արդեն հիշատակված Կոջա Նիշանջու ցուցակը (պայմանականորեն այն անվանել ենք «համառոտ»), ուր նշված է 3 հուլյունեթ՝ خیزان - Hizan, حکاری - Hakkâri, دنبلی - Dübülü, և 6 սանջակ՝ وستان - Vastan, مکس - Müküs, سیروی - Sirovi, قتور - Kotur⁴⁷: $\text{استون} - \text{Selmas}$, سلماس - Selmas, الباق < الباق - Şirevi (Şervi), شیروی < شیروی

Ինչպես տեսնում ենք, «համառոտ» ցուցակում հանդիպող 9-ը վարչամիավորներից 4-ը (2 հուլյունեթ և 2 սանջակ) նույնպես չեն հիշատակվում «ընդարձակում»: Այսպիսով, հարավային սանջակների մասին մեր տվյալներն ավելի բազմազան են, ինչը թույլ է տալիս բավարար չափով ամբողջական պատկերացում կազմելու էյալեթի այս հատվածի վարչական բաժանման մասին: Ընդ որում, վարչամիավորները տվել ենք «ընդարձակ» ցուցակում արևմուտքից արևելք ընթացող աշխարհագրական հաջորդականությամբ՝ անհրաժեշտ տեղերում խոսելով նաև բացակայողների մասին: Այդ հանգամանքն էլ օգնել է ճշտելու առանձին սանջակների տեղադրությունը:

⁴¹ ԺԵ-Ա, էջ 244: ԺԵ-Բ, էջ 620: ԺԵ-Գ, էջ 176-177: ՄՄ 4515, թ. 550: ՄՄ 6332, թ. 208: Ուշագրավ է, որ Շատախը դեռ 15-րդ դ. հիշատակվում է «երկիրս Ջերմածորոյ» հնագույն անվանաձևով: Տե՛ս ԺԵ-Բ, էջ 4: ՄՄ 6273, թթ. 125, 156:

⁴² «Ազգագրական հանդես», գիրք 25-րդ, թիվ 2, Թիֆլիս, 1914, էջ 190:

⁴³ Ղ. Ինճիճյանը Շատախը պարզապես հիշատակում է որպես «վիճակ ի գաւառին Ջուլամերկի» (իմա՝ Հաքարիի - Գ. Բ.): Տե՛ս նշվ. աշխ., էջ 163:

⁴⁴ Evliya Çelebi, s. 189.

⁴⁵ Նույն տեղում, էջ 178-179: Հայերեն թարգմանության մեջ նախավերջին հուլյունեթը՝ «Դումդեմի» (ԹԱ-3, էջ 244):

⁴⁶ Աղավաղված տեղանուններին զուգահեռ տվել ենք դրանց ճշտված ձևերը:

⁴⁷ Kâtib Çelebi, s. 411. Հմմտ. Charmoy F.B., Chêref-Nameh ou Fastes de la Nation Kourde par Cheref-ou'ddin, Prince de Bidlis, tome 1, première, St. Pétersbourg, 1868, էջ 162: Ֆրանսերեն թարգմանության մեջ վերջին սանջակը նշված է Ustoury ձևով, որը Կոթուրի (Ղոթուր) արաբատառ գրության բավական տարածված աղավաղումներից է: Նույնիսկ 19-րդ դ. վերջին քառորդի թուրքական տարբերքներում (սալնամեններում) հանդիպում են տեղանվան Kostur, Tostur, անգամ՝ Nostur աղավաղյալ տարբերակները:

ա) Ispayird⁴⁸. Համապատասխանում է հայկական Սպարկերտին (Սպայկերտ. Ispayird-ը, ըստ էության, վերջինիս թուրք-քրդական արտասանությունն է), որը 16-17-րդ դդ. հայկական ձեռագրերի հիշատակարաններում հիշվում է «Սպարկերտու երկիր» կամ «գաւառն Սպարկերտու» անուններով⁴⁹: Գրավում էր Արևելյան Տիգրիսի (Բոհտան) Կեցան վտակի ձախակողմյան վտակ Ջոջ գետ օժանդակի ձորահովիտը⁵⁰: Կենտրոնը համանուն բերդն էր՝ Հայկական Հուսա գյուղի մոտակայքում⁵¹:

բ) Տservi. Կոչվել է նաև Շիրվան (شروان - Şirvan, մեկ այլ ձևն է՝ Şirâvi): Ընկած էր Կեցան և Գյոզալդարա (պատմ.՝ Տատիկ) գետերի միջև՝ հարավում հասնելով մինչև Արևելյան Տիգրիս (Բոհտան): Հայկական սկզբնաղբյուրներում ավելի հաճախ հիշատակվում է «Շերվանք (Շրվանք)» անունով⁵²: Հանդիպում է նաև Շիրվան («Շիրուան») ձևով⁵³: Կենտրոնը Քուֆրա (Քոֆրե, Քյուֆրե, Քֆրա) բերդաքաղաքն էր: Քրդական շիրվալի (քրդերեն՝ şîrâvî)⁵⁴ ցեղի տիրույթն էր, որից էլ անվանումը:

գ) Zeriki. Կոչվել է նաև Ջըրկան (زریقان - Zerikan): Ընկած էր Շիրվանից արևմուտք՝ Գյոզալդարայի (Տատիկ) և Բաղիշոջրի (Բիթլիս-տու) միջագետքում: Պահպանված հազվագյուտ հայերեն ձեռագրական հիշատակարանում այս վարչամիավորը նշված է «ի յերկիրս, որ գոչի Ջըկանց» ձևով⁵⁵: Կենտրոնը Դերզնի (Դարզինի, Դեյրզին, Ջըրկան) բերդաքաղաքն էր՝ Բաղիշոջուր գետի ափին⁵⁶: Վարչամիավորի անունը կապվում է քրդական զըրկցի (քրդ.՝ zîrîki) ցեղի հետ, որն, ի դեպ, գավառը զավթել էր հայերից («անհավատներից»)⁵⁷:

դ) Kârnî և է) Hirun. Գտնվում էին Շիրվանից արևելք՝ բազմիցս հիշատակված Կեցան գետի միջին հոսանքի շրջանում (այդ հատվածում՝ Մոկս կամ Մուկուս, օտարա-հունչ՝ Müküs) և անմիջականորեն սահմանակցում էին: Առաջինը տարածվում էր Կեցանի երկու ափերին՝ համապատասխանելով 19-րդ դ. Կառնի կամ Կառնըկ նահիեին⁵⁸: Կենտրոնը Շաբստան բերդն էր⁵⁹, որը, մեր կարծիքով, գտնվել է ժամանակակից Կառ-

⁴⁸ Հանդիպում են տեղանվան աղավաղված արաբատառ մի շարք այլ տարբերակներ ևս՝ اسيايرت - Isyabert, اسبابيرت - Isbaberd կամ Esbaberd, اسنانيرت - Esnanert ևն:

⁴⁹ ՄՄ 4515, թ. 138, 677: ՄՄ 6843, թ. 180ա: Ավելի վաղ գավառանունը հանդիպում է «Սպատկերտ» > «Պատկերտ» անուններով: Տե՛ս ԺԵ-Ա, էջ 301:

⁵⁰ Սպարկերտի գետի վերոհիշյալ անվանումը տարիներ առաջ մեզ է հաղորդել հանգուցյալ պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր Ս. Պողոսյանը (գավառի Վ. Հյուրուք գյուղից – Գ. Բ.): Կոչվել է նաև «Շաբանու ճամ»: Տե՛ս Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Տ. Չիթունու ֆոնդ, գործ 2 (ԺՁ տետր):

⁵¹ Հայաստանի պատմության պետական թանգարան (ՀՊՊԹ), Ազգագրության բաժին, գ. 253, թ. 46:

⁵² ԺԵ-Ա, էջ 447: ԺԵ-Բ, էջ 18. «... ի թագաւորութիւն այլագեաց սեռից Շէրուանից (= Շերուանից) Միր Աւդալին»: ԺԵ-Գ, էջ 605. «... ի պարնութիւն Շերւընից Ջինարբէկին, և ի նայիպութիւն Սակալայ Իսլին» (2 դեպքում էլ ընդգծումը մերն է՝ Գ. Բ.): Հմմտ. «Մանր ժամանակագրություններ», հտ. Ա, էջ 284:

⁵³ «Հաւաքարան անուանց Կաթողիկոսաց (Աղթամարայ)», ծանօթութիւններով լոյս ընծայեաց Աղթամարեան Աթոռի հիմնարկութեան հազարամեակի (915-1915) առթիւ Մեսրոպ վ. Մաքսուդեանց, Ս. Էջմիածին, 1916 (այսուհետև՝ Հաւաքարան): Հմմտ. Գարեգին Ա Կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, հտ. 1 (Ե դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, 1951:

⁵⁴ Քրդերենի համար վերցրել ենք Հովսեփ Օրբելու մշակած տառադարձությունը՝ աննշան փոփոխություններով: Տե՛ս Օրбели И. А., Фольклор и быт Мокса, М., 1982, էջ 141-143: Հմմտ. Նույնի՝ Избранные труды в двух томах, том II, Ереван, 2002., էջ 35-38:

⁵⁵ «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբով Յակոբեանց», հտ. 5, Երուսաղէմ, 1971, էջ 369:

⁵⁶ Ինձիճեան, նշվ. աշխ., էջ 180: Տե՛ս նաև Էփրիկեան Ս., Պատկերագարդ բնաշխարհիկ բառարան, հտ. 1, Վենետիկ, Ս. Ղազար, 1903, էջ 603: Հանդիպում է նաև «Տէրզին» ձևով (ԺԵ-Ա, էջ 447): Էրզրումում Մեծ Բրիտանիայի հյուպատոս Ջ. Թեյլորը երբեմնի բերդաքաղաքի անվան ճիշտ ձևը նշում է Դեյրազինար (հեղինակի մոտ՝ Deyr Azinar), որի աղավաղումից առաջացել է Դեյրզինը (Deyr Zin). Տե՛ս Taylor J. G., Travels in Kurdistan, with Notices of the Sources of the Eastern and Western Tigris, and Ancient Ruins in Their Neighbourhood. – Journal of the Royal Geographical Society of L., volume 35, 1865, էջ 45:

⁵⁷ Шараф-хан ибн Шамсаддин Бидлиси, Шараф-намэ, перевод, предисловие, примечания и приложения Е. И. Васильевой, М., 1967, стр. 291.

⁵⁸ Տե՛ս Նահապետեանց Ղ., Խիզան.- «Մասիս», Վ.Պոլիս, 1884, թիւ 3596, էջ 3: Հայերեն հիշատակարաններից մեկում տեղանունը հիշատակվում է «Կռնի» ձևով. «Եւ աղայ մի Կռնոյ առաքեաց բազում քուրդս»: Տե՛ս ԺԵ-Բ, էջ 41: Այս տեղանունը հայտնի է նաև արաբատառ كرين (աղավաղված كرين - Kerin) ձևով:

⁵⁹ Шараф-хан, стр. 289:

նի (Կառնի-Նրզար) գյուղի մոտ: Hirsun-ը հայկական աղբյուրներում հայտնի է Հերուն («Յէրուն») կամ Էրուն (Իրուն) անուններով⁶⁰: Այն գտնվում էր Կառնիից հյուսիս-արևմուտք՝ Կեցանի աջակողմյան Բեկնովի (Բեյնովի) վտակի ձորահովիտում⁶¹: Կենտրոնը համանուն բերդն էր՝ ժամանակակից Էրուն (քրդ. Göndâ-İrûn) գյուղի մոտ⁶²: 15-րդ դ. վերջին թե՛ Կառնին և թե՛ Էրունը (Հիրունը) կազմում էին Շիրվանի իշխանության մաս և որպես սանջակ հանդես են եկել միայն 16-րդ դ. սկզբին⁶³:

զ) Kârkâr և է) Ağakis. Իրար սահմանակից այս սանջակները գրավում էին Կեցանի ձախակողմյան վտակ Կարկառի ձորահովիտը (ստորին հոսանքում՝ Եղեգիս կամ թրք. Ahkis-deresi): Հայկական աղբյուրներում դրանք դիտվում են միասնական Կարկառ գավառի բաղկացուցիչ մասերը (համապատասխանաբար՝ Վերին և Ներքին կամ Վարի): Կարկառը⁶⁴ որպես առանձին վարչամիավոր առաջացել է 16-րդ դ. 40-ական թթ.՝ զատվելով Մոկսից⁶⁵: Կենտրոնը Կարկառ կամ Կարկառի բերդն էր՝ այժմ էլ նույն անունը կրող գյուղի մոտ: Աղաքիսը կամ Եղեգիսը նույնպես հանդես է եկել բավական ուշ՝ 16-րդ դ. 20-30-ական թթ. առանձնանալով Սպարկերտից: Կենտրոնը Եղեգիս ավանն էր (թրք. և քրդ.՝ Ahkis կամ Ağakis, որտեղից օսմանյան սկզբնաղբյուրներում հանդիպող վարչամիավորի անվանումը): Հայերեն հիշատակարաններում այն հանդիպում է «երկիրն Եղեգիս» կամ ուղղակի «Եղեգիս» անուններով⁶⁶: Առանձին դեպքերում նույնացվել է հարևան Կեցանի հետ, քանի որ 17-րդ դ. 20-30-ական թթ. դիտվել է վերջինիս մասը⁶⁷:

ը) Kesan/ի. Գրավում էր Արևելյան Տիգրիսի Կեցան օժանդակի վերին հոսանքի շրջանը՝ համապատասխանելով հայկական Կեցան գավառին (Kesan-ը, փաստորեն, վերջինիս թրք.-քրդ. ձևն է): Հայերեն հիշատակարաններում այն գերազանցապես նշված է «երկիրս Կեցնայ» անունով⁶⁸: Հանդիպում է նաև «գաւառս Կեցնայ» ձևը⁶⁹: Բեյերի նստավայրը համանուն (նաև Կեցանի բերդ, քրդ.-թրք.՝ Kesan) ամրոցն էր Կարկառ և Կեցան գետերի ջրկիցից մի փոքր հարավ՝ Սմբոն գյուղի մերձակայքում⁷⁰:

թ) Müküs. Հայկական Մոկս (<Մոկք) տեղանվան թուրք-քրդական տարբերակը (հանդիպում է նաև աղավաղված կամ սխալ ընթերցված Mekes ձևը): Այս սանջակը գրավում էր Արևելյան Տիգրիսի (Բոհտան) Մոկաց-ջուր օժանդակի կամ վտակի (պատմ.՝ Որբ, թրք.՝ Müküs-çay) ավազանը: 15-17-րդ դդ. հայերեն հիշատակարաններում վարչամիավորը բազմիցս հիշատակվում է «Մոկաց երկիր», «երկիր(ս) Մոկաց կամ Մոզաց (Մոզկաց)»⁷¹, երբեմն՝ «երկիրս Մոկս»⁷² անուններով: Ուշագրավ է Մոկսի

⁶⁰ Տե՛ս մասնավորապես Հաւաքարան, էջ 192:

⁶¹ Копия, V-16. Հմմտ. „Eastern Turkey in Asia“, redrawn from Turkish Staff Map 1:200 000 at the Ordinance Survey Office, Scale 1:250 000, Sheet 19 (այսուհետև՝ Eastern Turkey և համապատասխան պլանշետի համարը):

⁶² Шараф-хан, стр. 284, 290. Առանձին քարտեզներում գյուղը հանդիպում է «Ֆիրուն» ձևով, որը, անշուշտ, արաբատար ڤيرون-ի ڤيرون աղավաղման հետևանք է (տե՛ս Копия, V-16: Eastern Turkey, Sheet 19: „Генеральный штаб Советской Армии“, 1981 (մ. 1:200 000), պլանշետ 10-38-13):

⁶³ Шараф-хан, стр. 284.

⁶⁴ Հայերեն հիշատակարաններում «Կառկառ»: Տե՛ս մասնավորապես ԺԵ-Ա, էջ 266: Հմմտ. ՄՄ 4515, թ. 377:

⁶⁵ Шараф-хан, стр. 271.

⁶⁶ Տե՛ս ԺԵ-Գ, էջ 499: ԺԵ-Գ, էջ 605: Հմմտ. Հաւաքարան, էջ 45:

⁶⁷ Տե՛ս մասնավորապես «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Գ (1641-1660 թթ.), կազմեց Վ. Հակոբյան, Ե., 1984, էջ 387 (այսուհետև՝ ԺԵ-Գ): Թերևս սրանով կարելի է բացատրել, որ 1621 թ. մի հիշատակարանում սանջակի կենտրոնը կոչվում է «Կեցնայ Եղեգիս» անունով: Տե՛ս ԺԵ-Բ, էջ 18:

⁶⁸ ՄՄ 4515, թ. թ. 352, 413, 470, 559: ԺԵ-Բ, էջ 387: ԺԵ-Գ, էջ 780: Հմմտ. ԺԵ-Ա, էջ 579: ԺԵ-Բ, էջ 165, 387:

⁶⁹ Տե՛ս ՄՄ 6273, թ. 226ա:

⁷⁰ Տե՛ս „Revue des études arméniennes“, t. X, Paris, 1973-1974, էջ 204-205 (ներդիրում): „Carte esquisse de la région de Hizan“: Կեցանը Ղ. Ինձիճյանը հիշատակում է որպես գյուղաքաղաք, «ուր նստի պէյ» (նշվ. աշխ., էջ 151): Ավելի ուշ շրջանի ցուցակներում այս բնակավայրն այլևս չի հանդիպում, ինչը ենթադրել է տալիս, որ այն ամայացել է կամ ավերվել (ամենայն հավանականությամբ 1847-1849 թթ. քրդական հուլյունեթների վերացման ընթացքում): Ուշագրավ է, որ Սմբոն գյուղի մոտ գտնվող ավերակ Սբ Աստվածածին վանքը հայտնի էր նաև Կեցնավանք անունով:

⁷¹ Տե՛ս ՄՄ 4515, թ. 255: ԺԵ-Ա, էջ 51, 95-96, 115, 148, 151, 219 և: ԺԵ-Բ, էջ 24, 75, 146, 248-249, 281 և: ԺԵ-Գ, էջ 155-157, 178, 203, 270: ԺԵ-Ա, էջ 154: ԺԵ-Բ, էջ 20, 210, 212, 420, 446, 486, 622, 665, 763: ԺԵ-Գ,

«իշխանանիստ գաւառ» (15-րդ դ. որոշ հիշատակարաններում՝ «արքունական երկիրս Մոկաց») ձևը⁷³, ինչը, մեր կարծիքով, Մոկսում հայկական պետական մնացորդի պահպանման արտահայտությունն էր, որն ավելի ուշ ստացավ մեկիքության կարգավիճակ: Կենտրոնը համանուն բերդաքաղաքն էր՝ վերջինիս ավին⁷⁴: 16-րդ դ. առաջին քառորդին Մոկսը ենթարկվում էր Բոհտանի (Ջեզիրեի) հուքումեթին, սակայն հետագայում ընդունեց Հաքարիի խաների գերիշխանությունը⁷⁵: Ըստ Շարաֆ-խանի՝ հարևան Սպարկերտի և Խիզանի նման այստեղ ևս իշխում էին նամիրի (nemîri) քրդերը⁷⁶: Ինչպես Շատախում, այնպես էլ Մոկսում հայերը պահպանել էին լայն ինքնավարություն⁷⁷:

ժ) Berde' (Berda'). Սանջակի ինչպես անվան, այնպես էլ տեղադրության ճշգրտումը որոշակի դժվարություններ է ներկայացնում: Որքան մեզ հայտնի է, նման փորձ արել է միայն Ա. Բիրքենը՝ այն ենթադրաբար կապելով Աղբակի Բերդուկ բնակավայրի հետ, ինչը ճիշտ չէ⁷⁸: Իրականում հիշյալ վարչամիավորը գտնվում էր Մոկսի անմիջական արևմտյան հարևանությամբ (ի դեպ, դա երևում է նաև «ընդարձակ» ցուցակից)՝ համապատասխանելով Մամռտանքի (Մամրտանք) գավառակին (քրդ. Nâmîran կամ Nemran)⁷⁹: Այս առումով խիստ արժեքավոր են Շարաֆ-խանի տեղեկությունները: Հեղինակի վկայությամբ, 1530-ական թթ. կեսերին Մուլեյման 1-ինի դիվանի կողմից Խիզանի հուքումեթը մասնատվել էր տեղի իշխող նամիրի ցեղի երկու ճյուղերի միջև, ընդ որում, այդ վիճակը պահպանվել էր նաև 1540-1560-ական թթ.⁸⁰: Քուրդ պատմագրի լրացուցիչ տվյալները ցույց են տալիս, որ Խիզանից սանջակի (իմա՝ օջաքլըքի - Գ. Բ.) կարգավիճակով առանձնացված մասը կոչվում էր Նամիրան (հայկական Մամռտանքը - Գ. Բ.)⁸¹: Շարաֆ-խանի մեկ այլ արժեքավոր տեղեկությունից պարզվում է, որ Նամիրանի սանջակի մեջ է մտել նաև Կեցանի ձախակողմյան Ջոջ-գետ կամ Սպարկերտ վտակի ստորին հոսանքի շրջանը, որն ավելի ուշ շրջանում կոչվում էր Նըզար (քրդ. Nizarê Azê)⁸²: Այստեղ անգամ 20-րդ դ. սկ. հանդիպող Բերդաղ (տեղական բարբառով՝ «Պերտաղ», վերջինը՝ կարճ «ա»-ä)⁸³ գյուղանունը վերջնականապես ճշտում է ոչ միայն սանջակի սահմանները, այլև անվանումը՝ برداغ - Berdağ կամ Berdeğ (Berdek, Pertek): Արաբական Է և Զ տառերի նմանությունը շփոթեցրել է Վանի էյալեթին գրեթե անձանորթ առաջին թուրք գրագիրներին, որոնք այս սանջակի անունը կապել են լավ հայտնի,

էջ 196, 230, 265, 328, 576, 690 ևն: Հիշատակարաններից մեկում վարչամիավորի անունը նշվում է բարբառային «եկիրս Մոկաց» ձևով: Տե՛ս Ժ-Գ, էջ 945:

⁷² Տե՛ս մասնավորապես Ժ-Գ, էջ 210, 212:

⁷³ Ժ-Գ, էջ 41: Հմմտ. Ժե-Ա, էջ 457, 527: Ժե-Բ, էջ 59, 201-202, 260:

⁷⁴ Արանով է բացատրվում որոշ հիշատակարաններում Մոկս գավառի «երկիրս Մոկաց քաղաքի» անվանաձևը: Տե՛ս Ժ-Բ, էջ 820: Ժ-Գ, էջ 300: Մոկսի վարչական կենտրոնը, ըստ պահպանված մի հազվագյուտ հիշատակարանի, կոչվել է Մեյդանի կամ Մեդնի. «... ի յիշխանանիստ գաւառէն Մոկաց, ի քաղաքի մեծ թաղէն, զոր Մեդնի է կոչած...» (ընդգծումը մերն է - Գ. Բ.): Տե՛ս Ժ-Գ, էջ 41:

⁷⁵ Ինձիճեան, նշվ. աշխ. էջ 161:

⁷⁶ Шараф-хан, стр. 264, 271.

⁷⁷ Վանի էյալեթի հայկական կիսանկախ իշխանությունների և ինքնավար համայնքների մասին տե՛ս Բադալյան Գ., Հայկական կիսանկախ իշխանություններն ու մեկիքություններն Արևմտյան Հայաստանում և Լեռնային Կիլիկիայում (17-րդ դ.-19-րդ դարի երկրորդ կես), «Վէմ» համահայկական հանդես, Ե., 2011, թիվ 3:

⁷⁸ Birken, նշվ. աշխ., էջ 176: Հեղինակը տեղանունը կարդացել է Bardū: Ի դեպ, Էվլիյա Չելեբիի լատինատառ տեքստում Berda' (նույն տեղում, էջ 117):

⁷⁹ Տե՛ս Նաթանեան Պ., Արտօսր Հայաստանի կամ Տեղեկագիր Բալուայ, Քարբերդու, Չարսանձագի, Ճապաղջուրի եւ Երզնկայու, Կ.Պոլիս, 1883, էջ 182: Այն փաստը, որ Խիզանի, Սպարկերտի և Մոկսի քրդերը կոչվել են նամիրի, ցույց է տալիս, որ նախապես նրանք հաստատված են եղել Մամռտանքում, որին էլ փոխանցել են իրենց անունը: Իսկ Նամիրան (տարբերակ՝ Նեմրան) - Մամռտանք փոխարկման համար հմմտ.՝ Մամրվան > Նամրվան > Նարիման, Էրզրումի էյալեթում:

⁸⁰ Шараф-хан, стр. 268, 269-270.

⁸¹ Նույն տեղում, էջ 270:

⁸² Հեղինակը հիշում է Ազ գյուղը (էջ 270), որը 19-րդ դ. վերջին Բիթլիսի վիլայեթի Խիզանի Նըզար նահիեի (գյուղախումբ) կենտրոնն էր: Տե՛ս Колубакин А.М., Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, том 8, часть 2, Тифлис, 1890, էջ 116: Ուշագրավ է, որ առանձին աղբյուրներում Նըզարը դիտվում է Մամռտանքի մաս (տե՛ս ՀՊԹԾ, Ազգագրության բաժին, գ. 253, թ. 49):

⁸³ ԳԱԹ, Տ. Չիթունու ֆոնդ, թ. 8:

նշանավոր Պարտավ քաղաքի հետ (արաբերեն՝ بريدة Berda'): Մեր կարծիքով, Բերդաղը, ինչպես ցույց է տալիս անվանումը, 16-րդ դ. կեսերին եղել է Նամիրանի բեյերի նստավայր-ամրոցը, և զարմանալի չէ, որ հիշյալ սանջակը թուրքական պաշտոնական փաստաթղթերում արձանագրվել է կենտրոնի անվամբ: 16-17-րդ դդ. հայկական աղբյուրներում այս վարչամիավորը Մամռտանքին (Մամրտանք) զուգահեռ կոչվել է նաև «երկիրն Մայեկաց» կամ «գաւառն Մայեկաց»⁸⁴: Կարծում ենք, սա Մոկքի տեղական բարբառային տարբերակն է, որտեղից էլ առաջացել է Մոկսի թրքերեն Mekes տարընթերցումը (եթե սխալ ընթերցում չի):

ժա) Vastan. Գրավում էր Վանա լճի հարավարևելյան ափամերձ շրջանը: Կենտրոնը նշանավոր Ոստան քաղաքն էր (օսմաներեն փաստաթղթում գրանցված է անվան օտար ձևը): Հայերեն ձեռագրական հիշատակարաններում այն կոչվում է «երկիրս Ոստանայ»⁸⁵, «Ոստանա աշխարհ»⁸⁶ կամ «գաւառս Ոստան»⁸⁷ անուններով: Վերջինս արդեն 14-րդ դ. 1-ին կեսին մտնում էր Հաքարիի հուլյունեթի մեջ⁸⁸: Ընդ որում, սկզբնապես Ոստանն ուներ բավական ընդարձակ տարածք: Մինչև 1532-1533 թթ. (Հ. 929) նրա մեջ էր մտնում նաև Գյավաշը (Գավաշ, պատմ. Ուտունիք) Աղթամարի հետ միասին, որոնք այնուհետև նվաճվեցին հարևան Բիթլիսի կողմից⁸⁹: Մեզ հասու տվյալները ցույց են տալիս, որ Ոստանի կազմում առանձին ժամանակահատվածներում եղել է նաև Խոշաբ կամ պատմական Հայոց ձոր գետի ստորին հոսանքի շրջանում տարածվող Հայոց ձոր գավառը (բարբառային Խավուձոր), որը հայկական աղբյուրներում հիշատակվում է «Հաւուց ձոր», «Հայկաձոր» կամ «Հայուձոր» ձևերով⁹⁰: Դա հատկապես երևում է Աղթամարի կաթողիկոսության թեմի գավառների ցուցակից, որն արտացոլում է 16-17-րդ դդ. վարչական իրավիճակը, և ուր այն հանդիպում է «Հայոց Ձորն և Ոստան» միասնական անվամբ⁹¹: Ի դեպ, նույն սահմաններով Ոստան վարչամիավորը հանդես է գալիս անգամ 19-րդ դ. երկրորդ կեսին⁹²: Սակայն հարկ ենք համարում նշել, որ Վանի էյալեթի վարչամիավորների սահմանները բավական հաճախ փոփոխվել են կախված ինչպես քուրդ ավատատերերի, այնպես էլ վերջիններիս և օսմանյան իշխանությունների փոխհարաբերություններից: Որոշակի ժամանակահատվածում (օրինակ՝ 18-րդ դ. վերջին – 19-րդ դ. սկզբին, ինչպես ցույց են տալիս Ղ. Ինճիճյանի տվյալները), սակայն, Հայոց ձորը մտել է նաև հարևան Վանի կենտրոնական սանջակի մեջ: Ոստանը, որպես առանձին սանջակ, հետագա պաշտոնական ցուցակներում այլևս չի հանդիպում:

ժբ) Lâdik. Հասու սկզբնաղբյուրների տվյալների համադրումը ցույց է տվել, որ «ընդարձակ» ցուցակում սանջակի անունը խիստ եղծված է: Մեզ հայտնի են տեղանվան հետևյալ տարբերակները՝ ա. كورلاديك - K/G/evirilâdik (Էվլիյա Չելեբի)⁹³, բ. Kôrlâvat կամ Kôrlevat (Այնի Ալի էֆենդի, հավանական արաբատառ ձևը՝ كورلاوات)⁹⁴, գ. Ghiorluk (Ռիկո, հավանական արաբատառ ձևը՝ كورلوك)⁹⁵, դ. Korlauk (ֆոն-Համներ, հավանական

⁸⁴ Տե՛ս ժԷ-Ա, էջ 192, 647: ժԷ-Բ, էջ 147, 371, 375, 851: ժԷ-Գ, էջ 353, 904: Հմմտ. ՄՄ 6273, թթ. 259ա, 287ա: 16-րդ դ. մի հիշատարանում Բերդաղ-Մամռտանքը հիշատակվում է «Մէմընդանք» ձևով (տե՛ս ՄՄ 6273, բ. 287բ), իսկ 17-րդ դ. կեսերի ձեռագրերից մեկում՝ «յերկիրս Մարեկա» ձևով (տե՛ս ժԷ-Բ, էջ 464):

⁸⁵ Տե՛ս ՄՄ 6332, բ. 134ա:

⁸⁶ Տե՛ս ՄՄ 4515, բ. 608 (պահել ենք ձեռագրի ուղղագրությունը):

⁸⁷ Տե՛ս ՄՄ 4515, բ. 548:

⁸⁸ Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 137-138:

⁸⁹ Шараф-хāн, стр. 258, 472.

⁹⁰ ժԷ - Գ, էջ 204: ՄՄ 6273, թթ. 258բ, 285ա:

⁹¹ Գարեգին Ա կաթողիկոս, նշվ. աշխ., էջ 191-192: Հմմտ. Հաւաքարան էջ 45. «հայոց ձորն ոստան» (պահել ենք բնագրի ուղղագրությունը):

⁹² Տե՛ս «Արեւելեան մամուլ», Ջմիռնիա, 1879, դեկտեմբեր (թիւ 12), էջ 364 (Լիմ անապատի միաբան Գ. Տեր-Բարսեղյանի կողմից 1853 թ. կազմված Վանի նահանգի գյուղացուցակները՝ արտատպված «Արծուի Վասպուրական» շաբաթաթերթի 1858 թ. թիվ 12-ից): Հմմտ. ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., բաժին III, գ. 57, բ. 36-38:

⁹³ Evliya Çelebi, s. 177. Հմմտ. ԹԱ-3, էջ 243 («Քուրլադք»): Հարկ է նշել, որ սանջակը հիշվում է նաև հեղինակի աշխատության առաջին հատորում («Քուրլատեք», արաբ. كورلاذك: Տե՛ս ԹԱ-3, էջ 32):

⁹⁴ Birken, նշվ. աշխ., էջ 179:

⁹⁵ Rycaut, նշվ. աշխ., էջ 177:

արաբատառ ձևը՝ *كورلاوك*⁹⁶: Դժվար չէ նկատել, որ հիշյալ բոլոր ձևերը գալիս են մեկ սկզբնական նախասորինակի աղավաղումից, ինչն ամենից առաջ հետևանք է արաբատառ գրության առանձնահատկությունների: Պայմանավորված աղավաղյալ տարբերակների մեծաթվությամբ, ինչպես նաև սկզբնաղբյուրներում սանջակի մասին լրացուցիչ որևէ այլ տեղեկության բացակայությամբ՝ Վանի էյալեթի վարչատարածքային բաժանման պատմությամբ զբաղվող որևէ ուսումնասիրող դեռևս չի փորձել ճշգրտելու վերոհիշյալ վարչամիավորի ինչպես անվանումը, այնպես էլ տեղադրությունը: Իրականում առաջին հայացքից բարդ թվացող այս հարցի պատասխանը տալիս է «ընդարձակ» ցուցակի աջաթևյան սանջակների հաջորդականությունը: Ինչպես նշել ենք, այն ընթանում է որոշակի օրինաչափությամբ՝ արևմուտքից արևելք: Հետևաբար, քննարկվող սանջակը պետք է փնտրել Մոկսից և Բերդաղից (Նամիրանից) արևելք: Ընդ որում, հարցը լիովին պարզվում է, երբ ցուցակի համապատասխան հատվածում «մտովի» տեղադրում ենք Մոկսին արևելքից սահմանակից Շատախը, որը, ինչպես տեսանք, հակառակ թուրքական մարտակարգի, ընդգրկված էր ձախաթևյան կամ հյուսիսային սանջակների շարքում: Շատախի հյուսիսարևելյան անմիջական սահմանակցությամբ՝ Արևելյան Տիգրիս-Բոհտան գետի վերին հոսանքի ձախափնյակում (այդ հատվածում՝ Շատախ կամ Նորդուզ), ուշ միջնադարից հայտնի էր **Գավրկանք (Գավրկանք)** գավառը: Վերջինս հանդիպում է 17-րդ դ. վերջին քառորդին ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանի «... ի յեկիրն **Գօրկանք** (իմա՝ Գաւրկանք – Գ. Բ.)» հատվածում⁹⁷: Չմոռանանք նշել, որ տեղական բարբառով տեղանունը հնչելու էր «Կավրոկանք», որի հավանական արաբատառ գրությունը լինելու էր *كوركانك* (կամ՝ *كوركانيك*) - G/K/evirkan/i/k⁹⁸: Վերջինիս սխալ ընթերցման արդյունքում էլ առաջ են եկել վերոբերյալ աղավաղումները⁹⁹: Հաշվի առնելով նշված տարածքի մակերևույթը՝ կարծում ենք, որ սանջակի սահմանները տարածվել են արևմուտքում Շատախից մինչև արևելքում Պաշատ լեռ (թրք.՝ *Başet-dağ*): Կենտրոնը Կասրիկ ավանի մոտ գտնվող Ալչակալե (Աղջաղալա) բերդն էր, որը, Շարաֆ-խանի տվյալներով, մահմուդի քրդական ցեղի ճյուղերից մեկի տիրույթներից էր¹⁰⁰: Պետք է ենթադրել, որ Գավրկանքը 16-րդ դ. առաջին կեսին մի կարճ ժամանակով որպես սանջակ առանձնացած է եղել Մահմուդիի հուլյունեթից և այդ կարգավիճակով էլ արձանագրվել «ընդարձակ» ցուցակում¹⁰¹:

ձգ) Özecik. Հայկական Արձակ գավառն է: Նույն հեղինակի մոտ հանդիպում են նաև տեղանվան ճշգրիտ ձևերը՝ *Erçek*¹⁰² < հյր. Արձակ կամ *Erecik*¹⁰³: Ավելին, թուրք

⁹⁶ von Hammer, նշվ. աշխ., էջ 262:

⁹⁷ ՄՄ 6332, թ. 247բ: Պարզ չէ միայն, թե հայ մշակույթի երախտավոր Ղ. Փիրդալեմյանը, որի ընդօրինակությունն ենք օգտագործել, արդյոք տեղանունը նույնությամբ վերցրել է ձեռագրի՞ց, թե՞ սեփական նախաձեռնությամբ է «աւ» տառակապակցությունը փոխարինել «օ»-ի:

⁹⁸ Չենք բացառում նաև *كورخان* - G/K/evirkhan տարբերակը (տե՛ս Eastern Turkey, Sheet 20: „Gevirkhan-plain,.): Հայկական աղբյուրներում գավառը հայտնի է նաև Կավրկան/ք/ անունով: Տե՛ս Գ. Սրվանձտյանց, Երկեր, հտ. 1, Ե., 1978, էջ 401: «Մասիս», Կ. Պօլիս, 1882, թիւ 3220, էջ 3: Մինչև Մեծ եղեռն Գավրկանքը պատմական Վասպուրականի նշանավոր Հոգյաց-վանքի թեմերից մեկն էր: Տե՛ս «Աշխատանք», Վան, 1912, Բ տարի, հ. 12 (59), էջ 10 (904): Բնակավայրերից հայտնի էին Ջախտուկը, Կանգվարը, Կասրիկը, Փակահը (Փակա-աղնին) ևն:

⁹⁹ Տվյալ դեպքում գործ ունենք արաբ. *ك* և *ل* տառերի հաճախակի հանդիպող շփոթի հետ (հմմտ. Ֆոն Համմերի մոտ՝ *Agalis* փոխանակ *Agakis*, որը գալիս է արաբ. *اغاليس < اغاكيس* աղավաղումից: Տե՛ս von Hammer, նշվ. աշխ., էջ 262):

¹⁰⁰ *Шараф-хан*, стр. 351-352. Բերդի մասին հետաքրքիր տվյալներ է հաղորդում նաև Ղ. Ինժիճյանը. «Ազձագալա. 4 ժամու հեռի ի Հոգւոց վանուց: Է աւերակ բերդի ի գլուխ լերին, որ ոչ բազում ամօք յառաջ քանդեցաւ, յորում յառաջագոյն նստէր և պէյ» (տե՛ս նշվ. աշխ., էջ 157):

¹⁰¹ Հմմտ. Արձակը, որն առանձնացել է նույն Մահմուդիից, Աղբակը՝ Հաքարիից, Բերդաղ-Մամուտանքը՝ Խիզանից:

¹⁰² *Evliya Çelebi*, s. 272. Ի դեպ, լատինատառ տեքստում տեղանունը նշված է ուղղված ձևով (էջ 117): Ամենայն հավանականությամբ կազմողների ձեռքին եղել են Չելեբիի գործի մի քանի ձեռագիր օրինակներ, որի շնորհիվ նրանք կարողացել են ճշտել աղավաղված տարրընթերցումները:

¹⁰³ *Evliya Çelebi*, s. 177. Հմմտ. ԹԱ-3, էջ 30, 243: Կարծում ենք, 2 անվան նախատիպը կարելի է համարել 17-րդ դ. մի հայերեն ձեռագրի հիշատակարանում հանդիպող «Երկիր Ըրըձակոյ» տարբերակը: Տե՛ս ԺԷ-Ա, էջ 521:

ճանապարհորդի երկի 4-րդ հատորում պահպանվել է սանջակբեյի կողմից կառավարվող այս վարչամիավորի ուշագրավ մանրամասներ պարունակող նկարագրությունը¹⁰⁴, ինչը հնարավորություն է ընձեռում բավական ճշգրիտ կերպով որոշելու վերջինիս տարածքն ու սահմանները: Ըստ այդմ, Արձակը համապատասխանել է Վանից արևելք ընկած պատմական Վասպուրականի Արձիշակովիտ գավառին՝ ընդգրկելով Արձիշակ կամ Արձակ գետի (ուշ միջնադարում հորջորջվում էր Մահմադիկ կամ Մեհմեդիկ) և համանուն Արձակա լճակի փակ ավազանը: Մեզ հասու սկզբնաղբյուրներից պարզվում է, որ Արձակը պաշտոնապես կոչվել է նաև Օվաջիկ (թրք.՝ Ovecik) կամ Էվեջիկ անունով (բառացիորեն՝ «հովիտ» կամ «դաշտակ»), ինչն օսմանյան պաշտոնական փաստաթղթերում օգտագործվել է Erecik-ին զուգահեռ¹⁰⁵: Հատկանշական է, որ ֆրանսիացի դիվանագետ Պիեռ Ամադե ժոբերը շատ ավելի ուշ՝ 1806 թ., անցնելով Արձակի տարածքով, լճակը հիշատակում է Էվեջիկի (Evedjik) կամ Արձակի (Erdjek) լիճ զույգ անուններով¹⁰⁶: Կասկած չի կարող, որ Օվաջիկ-Էվեջիկ անվանաձևը հնագույն Արձիշակովիտի (իմա՝ «Արձիշակ գետի հովիտ») իմաստավորումն է թուրքերենով: Ընդ որում, նմանատիպ տեղանվան¹⁰⁷ գոյությունը Վասպուրականի (Կոթուրի կամ Ղոթուրի) լեռնաշղթայի արևելյան ստորոտին՝ Մակվի գավառում (այժմ՝ Իրանի կազմում), շփոթության մեջ է գցել Ա. Բիրքենին, որն այն տեղադրել է վերջինիս տարածքում¹⁰⁸: Վարչամիավորը հանդիպում է մեզ հասու գրեթե բոլոր սկզբնաղբյուրներում, սակայն տեղանվան կրկնակ ձևերը հաճախ տարբեր հեղինակների մոտ տեղիք են տվել շփոթի և բազմաթիվ աղավաղումների: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք 2 խմբի են բաժանվում: Առաջինի մեջ են մտնում Արձակից (թրք.՝ Erçek, արաբ. ارچک) բխող աղավաղումները¹⁰⁹: Երկրորդ խմբի աղձատումներն արդեն առաջ են եկել Օվաջիկից (թրք.՝ Ovecik կամ Evecik, արաբ. اوه جيک)¹¹⁰:

Արձակի կենտրոնը համանուն բերդն էր¹¹¹, որն ամենայն հավանականությամբ գտնվել է Արձակա լճի ափամերձ նույնանուն ավանի արևելյան կողմում բարձրացող Սուրբ Սարգիս (տեղացիների բարբառով՝ «Սըվի Սարկյիս») բլրի վրա, ուր 20-րդ դ. սկզբին պահպանվել էին վանքի կամ բերդի մնացորդներ: Ի դեպ, նույն բլրի ստորոտին, գյուղատնտեսական աշխատանքների ընթացքում հայտնաբերվել էին նաև մարդկային բնակության զանազան հետքեր (ամանեղեն, ջրմուղի կավե խողովակներ ևն)¹¹²: Ինչպես Աբաղան, Բերկրին և Գավրկանքը, Արձակը նույնպես եղել է մահմուդիների օջաքլըքներից մեկը: 18-րդ դարից, սակայն, այն արդեն չի հանդիպում պաշտոնական փաստաթղթերում: Ղ. Ինձիճյանի տվյալներն անուղղակիորեն ցույց են տալիս, որ Արձակը, որպես վարչամիավոր, վերացվել էր՝ մտնելով Վանի կենտրոնական սանջակի (թրք.՝ paşa-sancağı) մեջ, և անմիջապես ենթարկվում էր բեյլերբեյ-փաշային¹¹³:

ժդ) Elbak¹¹⁴. Հայկական Աղբակ գավառն է՝ Տիգրիս գետի երրորդ բազուկը համարվող Մեծ Ջաբ գետի վերին հոսանքի շրջանում: Կենտրոնը Բաշկալե (պատմ.՝ Հաղամակերտ) բերդաքաղաքն էր՝ նույն գետի աջափնյակում: 16-17-րդ դդ. հայերեն ձեռա-

¹⁰⁴ Evliya Çelebi, s. 274.

¹⁰⁵ St' u Kâtib Çelebi, էջ 411: Հմմտ. De Hammer J., Histoire de l'Empire Ottoman, tome 17, Paris, 1841, էջ 59:

¹⁰⁶ Հակոբյան Հ., Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության: Ուղեգրություններ, հտ. 2, ԺԹ դարի առաջին քսանամյակ (1800-1820), Յերևան, 1934, էջ 222:

¹⁰⁷ Ժողովրդական արտասանությամբ «Ավաջուղ»:

¹⁰⁸ Birken, նշվ. աշխ., էջ 179:

¹⁰⁹ Ա. Բիրքենը միայն Այնի Ալիի աշխատությունից դուրս է բերել Öçek (Uçek), Özpek, անգամ՝ Osdpek անվանաձևերը, որոնց նախատիպերն են արաբատառ ارچک կամ جيک գրությունները:

¹¹⁰ Ռիկոյի մոտ վարչամիավորը հիշատակվում է Edegik ձևով (արաբ. اده جيک), որը اوه جيک (Ovecik)–ի աղավաղումն է: St' u Rycout, նշվ. աշխ., էջ 53:

¹¹¹ Evliya Çelebi, s. 274.

¹¹² St' u Սերինե (Սերինե Ավագյան), Արձակ.- «Հայ ազգագրություն և բանահյուսություն», պրակ 8, Ե., 1978, էջ 13:

¹¹³ Ինձիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 151:

¹¹⁴ Վանի էյալեթի սանջակների շարքում հանդիպում է նաև Ֆոն-Համմերի մոտ: St' u von Hammer, էջ 262: Aqaf (արաբ. اقباق < اقباق):

գրական հիշատակարաններում բազմիցս հիշատակվում է «երկիրս Աղբակու» անունով¹¹⁵: 14-15-րդ դդ. առաջին կեսին համարվելով Հաքարիի հուքյունեթի բաղկացուցիչ մասը՝ Աղբակն ակկոյունլուների տիրապետության հաստատվելուց հետո (15-րդ դ. 60-ական թթ.) հանձնվեց մահմուդի քրդերին և նրանց ձեռքում մնաց մինչև 16-րդ դ. 1-ին կեսը¹¹⁶: Կրկին վերադարձվելով Հաքարիին՝ գավառը հետագա տասնամյակներին շարունակում էր դիտվել որպես առանձին սանջակ: Նման կարգավիճակով Աղբակը գրանցված է 1574 թ. (Ֆերիդուն-բեյ)¹¹⁷ և 1596-1597 թթ. (Շարաֆ-խան)¹¹⁸: Վերջինիս հաղորդմամբ, այստեղ իշխում էին Հաքարիի խանական տոհմի կրտսեր ճյուղի ներկայացուցիչները: Սակայն հաջորդ տասնամյակներին Աղբակն արդեն չի հիշատակվում Վանի էյալեթի սանջակների շարքում: Այն ամբողջովին «լուծվել» էր Հաքարիի մեջ, իսկ Բաշկալեն՝ դարձել խաների ամառային նստավայրը¹¹⁹:

ժե) Biredusi, ժզ) Dūmdūmi և ժէ) Dalegirer. Առաջինը՝ Բրադոստի (կապվում է համանուն քրդական ցեղի հետ), իսկ երկրորդը՝ Ուրմիայի կամ Դիմդիմի¹²⁰ օսմանյան անվանումներն են: Ինչ վերաբերում է Dalegirer-ին¹²¹, ապա այն հանդիպում ենք միայն Էվլիյա Չելեբիի մոտ: Հեղինակի լրացուցիչ տեղեկություններից պարզվում է, որ սանջակը գոյություն ուներ նաև 17-րդ դ. երկրորդ կեսին¹²²: Թերևս անհրաժեշտ տվյալների պակասն է հիմնական պատճառը, որ առ այսօր միայն Ա. Բիրքենն է փորձել ձշտել այս սանջակի տեղադրությունը: Ընդ որում, գերմանացի արևելագետը, Dalegirer-ն ակնհայտորեն նույնացնելով Այնի-Ալի էֆենդիի կողմից 17-րդ դ. սկզբին Վանի էյալեթի սանջակների շարքում հիշվող Dere-ին, այն տեղադրում է «ենթադրաբար Բաշկալեյից հարավ-արևելք»¹²³: Ըստ այդմ, քննարկվող վարչամիավորը գերմանացի արևելագետի կարծիքով համընկնում է ժամանակակից Նազլու-չայ (պատմ.՝ Այլի կամ Էլի) գետի ակունքների շրջանում և վերջինիս ծախակողմյան Բաժերգա-դերե վտակի ձորահովտում ընկած Դեյրի (Մարբիշո) գավառին: Նշենք սակայն, որ ինչպես երևում է Շարաֆ-խանի մի թռուցիկ, բայց արժեքավոր տեղեկությունից, Դեյրին 16-րդ դ. մտել է Հաքարիի կազմի մեջ¹²⁴: Ավելին, ուսումնասիրությունը պարզել է, որ Dere-ն առանձին սանջակ էր և բոլորովին կապ չուներ Dalegirer-ի հետ¹²⁵: Հետևաբար Ա. Բիրքենի տեսակետն ընդունելի չէ: Իրականում «ընդարձակ» ցուցակում աջաթևյան սանջակների հաջորդականությունը, ինչպես նաև վերոհիշյալ Biredusi և Dūmdūmi վարչամիավորների առկայությունը որոշակիորեն պարզում են Dalegirer-ի տեղադրությունը: Ըստ էության, խոսքը

¹¹⁵ Տե՛ս ժԷ-Ա, էջ 304: ժԷ-Գ, էջ 646 (բարբառային «ի յերկիրս, որ Յաղբակ ասի» տարբերակով): ՄՄ 3585, թ. 298բ: ՄՄ 3662, թ. 310բ: ՄՄ 4515, թթ. 219, 460, 523, 526: ՄՄ 6273, թ. 212բ: ՄՄ 6332, թ. 188բ:

¹¹⁶ Шараф-хан, стр. 349, 351.

¹¹⁷ ԹԱ-2, էջ 221. «Էլբաֆ» (արաբ. الباف < الباق: Այսուհետև՝ ԹԱ-2): Շարաֆ-խանը նույնպես վկայում է, որ Աղբակը սանջակի «իրավունքներով» (իմա՝ որպես օջաքլըք - Գ. Բ.) 16-րդ դ. 70-ական թթ. հանձնվել էր Հաքարիի Չեյնալ խանի որդիներից մեկին (տե՛ս Шараф-хан, էջ 164):

¹¹⁸ Նույն տեղում, էջ 167:

¹¹⁹ Percy E., Highlands of Asiatic Turkey, London, 1901, p. 241.

¹²⁰ Петрушевский, նշվ. աշխ., էջ 127:

¹²¹ Էվլիյա Չելեբիի լատինատառ տեքստում՝ Dalegerz (էջ 117):

¹²² Evliya Çelebi, s. 177, 203. Հայերեն թարգմանության մեջ, տեղանունը նոր աղավաղման ենթարկվելով, վերածվել է «Դալեկիրտ»-ի (տե՛ս ԹԱ-3, էջ 243, 245):

¹²³ Birken, նշվ. աշխ., էջ 177:

¹²⁴ Шараф-хан, стр. 248.

¹²⁵ Այլ սկզբնաղբյուրներից Dere-ն հայտնի է նաև Deregher (արաբ. دره کر. տե՛ս Rycaut, նշվ. աշխ., էջ 242) և Dere-Eleger (արաբ. دره الكر. տե՛ս von Hummer, էջ 177) ձևերով, որոնք ցույց են տալիս, որ Այնի-Ալիի մոտ տեղանունն արտացոլվել է աղճատված, ոչ-ամբողջական տեսքով: Կասկած չի կարող, որ նշված բոլոր անվանաձևերն առաջ են եկել دره الكرز (نره الاكر) - Dere-i Alagez (նաև՝ Dere-i Alkis) ուղիղ ձևից, որը, ինչպես հայտնի է, Եղեգյաց ձորի (հնագույն՝ Վայոց ձոր) օտար անվանումն է (նաև՝ Դարալազյազ): 16-րդ դ. վերջին այն մտնում էր օսմանյան նվաճումների հետևանքով ստեղծված Երևանի էյալեթի (ایالت روان - Eyâlet-i Revan) մեջ: Վերջինիս արաբատառ գրության եղծումով (وان > روان) պետք է բացատրել Դարալազյազի (Դերե-Ալքիս) հայտնվելը Վանի էյալեթի սանջակների շարքում: Ավելացնենք, որ նույն ձևով Այնի-Ալիի մոտ վերջինիս կազմում նշվում է նաև Gökçe - Գյոքչե սանջակը, որը նույնպես մտնում էր Երևանի էյալեթի մեջ և ընդգրկում Սևանի ավազանը (տե՛ս Birken, նշվ. աշխ., նույն տեղում: Հմմտ. Rycaut, նշվ. աշխ., էջ 177: von Hummer, նշվ. աշխ., էջ 262):

վերաբերում է Դեյրիից արևելք ընկած Թարգյավառին: Ընդ որում, արաբագիր *كر*- վերջավորությունը հարկ է սրբագրել *كور*-, որով տեղանունը վերածվում է *داله كور* – Dalegever-ի (Դալեգյավառ), ինչը մենք հակված ենք համարելու Թարգյավառ տեղանվան տարբերակներից մեկը (հմմտ. Շահրիզոր/Շահրիզուր-Շահրիզուլ, Չարդերան-Չալդըրան, Շորեգեր-Շորեգել, որտեղից՝ Շորագյալ են):

Նշված վարչամիավորներն առաջացել էին պատմական Պարսկահայքի տարածքում ստեղծված Բրադոստի ընդարձակ իշխանության տրոհումից: Նրա հիմնադիրն էր 15-րդ դ. Շահրիզորից այստեղ տեղափոխված քրդական համանուն ցեղի ճյուղերից մեկի¹²⁶ առաջնորդ Սուլթան-Ահմեդի որդին, որը, 16-րդ դ. սկզբին ընդունելով Սեֆյանների գերիշխանությունը, շահ Իսմայիլ 1-ինի կողմից ստացել էր «Ղազիղեան» պատվանունը¹²⁷: Շահական դիվանի կողմից Ղազիղեանին, ում մինչև այդ արդեն պատկանում էր Ուրմիան (Դիմդիմ), հանձնվեցին նաև Ուրմիո կամ Կապուտան լճից արևմուտք ընկած Թարգյավառը, Սոմայը (Սոմային) և Դուլը (Դուլ)¹²⁸: Դրանով, Շարաֆ-խանի բնութագրմամբ, «Բրադոստի վիլայեթի» սահմաններն արևելքում Ուրմիո լճից հասան մինչև արևմուտքում Ջազրոսի լեռնաշղթա: Ավելի ուշ, ենթարկվելով Օսմանյան կայսրությանը, նույն ցեղապետին հաջողվեց միառժամանակ պահպանել իր իշխանության ամբողջականությունը: Սակայն, ինչպես ցույց են տալիս քուրդ պատմագրի տվյալները, նրա մահվանից անմիջապես հետ (հավանաբար՝ 1530-ական թթ.) Բրադոստից առանձնացավ Թարգյավառը, որը սկսեց կառավարվել այլ իշխողի կողմից «սանջակի իրավունքով»¹²⁹: 1540-ական թթ. վերջին, հարևան Հաքարիի Ջեյնալ-բեկի անմիջական միջամտությամբ, Թարգյավառի հյուսիսային մասում նույնպես ստեղծվեց մի նոր սանջակ՝ Սոմայը (Սոմայի)¹³⁰: Վերջինս էլ հենց համապատասխանում է Էվլիյա Չելեբիի կողմից հիշատակվող Biredusi-ին: Այսպիսով, Վանի էյալեթի կազմավորման սկզբում նախկին միասնական Բրադոստի իշխանության տարածքում արդեն գոյություն ունեին ինքնուրույն 3 վարչամիավորներ, որոնք էլ արձանագրվել են այդ շրջանի օսմանյան վավերագրերում: Դրանցից Թարգյավառը (Dalegever) զբաղեցնում էր Բրադոստի հարավարևմտյան մասը՝ ընդգրկելով Ուրմիո լիճ թափող Նազլուչայի միջին, ինչպես նաև Ռուզեչայ (Ռավզաչայ) և Բերդասուր-չայ (հայկական՝ Բերդածոր) գետերի վերին հոսանքի շրջանները, որոնք զբաղեցնում էին ժամանակակից Ուրմիայի Բրադոստ, Դաշտ կամ Բերդասուր-Բերդածոր, Թարգյավառ մահալները¹³¹: Ըստ Շարաֆ-խանի՝ տեղի իշխողները պաշտոնապես կոչվել են «Թարգյավառի և Կալե-Դաուդի էմիրներ», ինչը թույլ է տալիս սանջակի կենտրոնը նույնացնել Նազլու-չայի ափին գտնվող Կալե-Դաուդ կամ Ամիր-Դաուդ բերդի հետ՝ ժամանակակից Միր-Դաուդ գյուղի մերձակայքում¹³²: Սոմայը (Սոմային) կամ Բրադոստը (օսմաներեն տարբերակը՝ Biredusi) գրավում էր Նազլու-չայի Բրադոստ (պրսկ.՝ Rūd-ē Barādūst) վտակի ձորահովիտը: Ենթադրելի է, որ սանջակի կենտրոնը եղել է Քյաթիբ Չելեբու կողմից հիշատակվող Միր-Նասրը բերդը (Kalē-ī Mīr Nasīr)¹³³: Ուրմիայի կամ Դիմդիմի (Dümdümü) մեջ էին մտնում Նազլու-չայ, Բերդասուր-չայ (Բերդածոր, այդ հատվածում՝ Շհար-չայ) և Բարանդուզ-չայ

¹²⁶ Шапаф-хан, стр. 345. Քուրդ պատմագրի տվյալներով, բրադոստը նախապես հաստատվել էր Խան-Ալմասում, որը Է. Վասիլևան, վկայակոչելով Պ. Բուտկովին, նույնացնում է Սալմաստին (Սալմաս: Նույն տեղում, էջ 530): Մեր կարծիքով խոսքը գնում է Ուրմիո լճից հյուսիս գտնվող Թասվիջի (Թասուջ, Թացու) շրջանի մասին, ուր ներկայումս էլ պահպանվել են Ալմաս և Ալմաս-չայ տեղանուններ (տե՛ս ԲՄ-10-38-16): Ամենայն հավանականությամբ, ավելի ուշ այդ ցեղը տեղաշարժվել է հարավ և հաստատվել այն տարածքում, ուր և հիմնել է իր անունով կոչված իշխանությունը:

¹²⁷ Նույն տեղում:

¹²⁸ Шапаф-хан, նույն տեղում:

¹²⁹ Նույն տեղում, էջ 348:

¹³⁰ Նույն տեղում:

¹³¹ Ուշագրավ է, որ 20-րդ դ. սկզբին վերոհիշյալ գավառները դեռ շարունակում էին հանդես գալ Թարգյավառ ընդհանուր անունով [տե՛ս Percy, Highlands, „Map of Hakkari” (ներդիրում): Հմմտ. Eastern Turkey, Sheet 27]:

¹³² Шапаф-хан, стр. 346.

¹³³ Kâtib Çelebi, s. 420. 19-րդ դ. վերջին – 20-րդ դ. սկզբին Սոմայը դեռ պահպանել էր Բրադոստ (Սոմայ-Բրադոստ) կրկնանունը (տե՛ս Percy, Highlands, նշվ. քարտեզը: Eastern Turkey, նույն տեղում):

գետերի ստորին հոսանքի շրջանները զբաղեցնող, անմիջապես Ուրմիո լճի ափին գտնվող մի շարք մահալներ (Բարանդուզ, Բարքիշլի-չայ, Դոլ, Նազլու-չայ ևն): Այս սանջակի կենտրոնը Ուրմիա նշանավոր քաղաքն էր (հայկական պատմական սկզբնաղբյուրներում՝ Որմի): Ի տարբերություն առաջին երկու սանջակների, Ուրմիան կամ Դիմ-դիմը Բրադոստ ցեղի ձեռքում մնաց մինչև 1628 թ., երբ Շահ-Աբաս 1-ինն այն հանձնեց կազլբաշ աֆշարներին¹³⁴:

ժը) Beni-Kotur. Փաստաթղթերում ավելի հաճախ հանդիպում է տեղանվան ամբողջական՝ اکراد بن قطور - Ekrad-i ben-i Kotur ձևը: Սանջակը զբաղեցնում էր Արաքսի աջակողմյան Կոթուր-չայ վտակի (պատմ. Կարմիր-գետ) վերին հոսանքի շրջանը: Նույն գետի ափին էլ գտնվում էր այս սանջակի կենտրոնը՝ համանուն բերդը (պատմ. Կոտորոց-բերդ): 1554-ից որպես օջաքլըք, Կոթուրը սուլթանական կառավարության կողմից շնորհվել էր դմբուլի քրդական ցեղի շառավիղներից մեկին¹³⁵: Սակայն ավելի ուշ շրջանի աղբյուրների տվյալների համաձայն այն անցել էր մահմուդի բեյերին:

ժթ) Dumbuli. Վերը հիշված համանուն քրդական ցեղի ժառանգական գլխավոր տիրույթն էր հուլյունեթը¹³⁶: Դեռևս 15-րդ դ. սկզբին՝ կարակոյունլուների տիրապետության ժամանակ, դմբուլիներին էր շնորհվել Վասպուրականի լեռնաշղթայից արևելք՝ Աղչայ (պատմ. Ճուաշոտ) գետի վերին հոսանքի շրջանում ընկած Սոքմանաբաղը (Սոքմանավա)¹³⁷: 16-րդ դ. առաջին կեսին շահ Թահմասպ 1-ինը ցեղապետ Հաջի-բեկին հանձնեց նաև Խոյը (պատմ. Հեր), որը դարձավ վարչամիավորի նոր կենտրոնը: Դրանով Դմբուլիի սահմաններն արևելքում հասան մինչև Դոթուր-չայ¹³⁸: Այս տարածքով էլ 1540-ական թթ. վերջին Դմբուլիի հուլյունեթն ընդգրկվեց Վանի էյալեթի կազմում:

հ) Çobanlı և իա) Colani. Սկզբնաղբյուրներն այս երկու սանջակները ուղղակի հիշատակում են՝ առանց որևէ լրացուցիչ տեղեկություն հայտնելու: Ընդ որում, եթե առաջինը հանդիպում է նաև Այնի-Ալի էֆենդիի և Ռիկոյի գործերում¹³⁹, ապա երկրորդը վկայված է միայն Էվլիյա Չելեբիի կողմից: Այդ իսկ պատճառով հիշյալ վարչամիավորների տեղադրությունը ոչ մի ուսումնասիրող դեռևս չի փորձել ճշտել¹⁴⁰: Մեր կարծիքով, հարցը կարելի է պարզել՝ դարձյալ ավելի ուշադիր քննելով թուրք ճանապարհորդի հաղորդած տեղեկությունները: Ինչպես տեսանք, Չոբանլուն «ընդարձակ» ցուցակում հիշվում է Կոթուրից (Beni Kotur) անմիջապես հետո՝ եթե ոչ սահմանակցությամբ, ապա գոնե մերձակայքում: Իրոք, Կոթուրից արևելք՝ Ուրմիո լճի հյուսիսարևմտյան ափին, ներկայումս էլ պահպանվել են Չոբանլու անունով զույգ գյուղեր (Վերին և Ներքին, պարսկերեն՝ Ćūpānlū), որոնք փաստորեն ճշտում են քննարկվող սանջակի տեղադրությունը: Վստահաբար կարելի է պնդել, որ Չոբանլուն գրավել է նույն լիճը թափվող Ջոլա-չայ գետի ստորին հոսանքի շրջանը՝ նույնանալով «համառոտ» ցուցակի Selmas-Սալմաստ սանջակին: Ընդ որում, ամենայն հավանականությամբ վերջինիս կենտրոնը պատմական Սալմաստ քաղաքն էր (հին հայկական աղբյուրներում՝ Սաղամաս), որը 19-20-րդ դդ. հայտնի էր Քյոհնաշիար անունով («Հին-քաղաք», ի տարբերություն ավելի ուշ վարչական նոր կենտրոնի վերածված Դիլման բնակավայրի): 16-18-րդ դդ. Չոբանլու-Սալմաստը նույնպես դմբուլիների ժառանգական տիրույթներից էր¹⁴¹: Ինչ վերաբերում է Colani-ին, ապա վերջինիս տեղադրությունը ճշտվում է մեր կողմից նա-

¹³⁴ Петрушевский, նշվ. աշխ., էջ 128:

¹³⁵ Шараф-хан, стр. 360.

¹³⁶ Նուն տեղում, էջ 358:

¹³⁷ Шараф-хан, стр. 357. Հմմտ. Петрушевский, նշվ. աշխ., էջ 104:

¹³⁸ Նույն տեղում, էջ 358: Խոյը դմբուլիների ժառանգական տիրույթը մնաց մինչև 1805 թ. (տե՛ս Петрушевский, նշվ. աշխ., էջ 129):

¹³⁹ Birken, նշվ. աշխ., էջ 176: Rycaut, նշվ. աշխ., էջ 177: Ի դեպ, Էվլիյա Չելեբիի աշխատության մեջ Չոբանլուն հանդիպում է ևս երկու անգամ՝ 1-ին (տե՛ս ԹԱ-3, էջ 32) և մեր կողմից բազմիցս օգտագործված 4-րդ հատորներում (Evlīya Çelebi, էջ 177): Հմմտ. նաև՝ von Hammer, նշվ. աշխ., էջ 262: „Dschoanlar“ (արաբ. چوبانلو < چوبانلر):

¹⁴⁰ Ա. Բիրքենը Colani-ին ընդհանրապես չի անդրադարձել:

¹⁴¹ Tārix-ē Ālamāray-ē Abbāsī, ta'rif-ē Eskandar biġ Torkemān, Tehrān, 1334 (1916, պարսկերեն), s. 1084. Հմմտ. Петрушевский, նշվ. աշխ., էջ 129:

խապես հիշատակված Էվլիյա Չելեբիի՝ Պարսկահայքի տարածքում գոյություն ունեցող հինգ «հուքյունեթների» մասին տվյալների քննությամբ: Դրանցից չորսի տեղադիրքը՝ Դմբուլի, Բրադոստ կամ Սոմայ, Կոթուր, Ուրմիա-Դիմդիմ, որ, ինչպես տեսանք, ստույգ հայտնի է, որոշակիորեն ցույց է տալիս, որ քննարկվող հինգերորդ վարչամիավորը պետք է փնտրել Ջուլա-չայի վերին հոսանքի շրջանում: Ըստ այդմ, Colani-ն տեղադրվում է Չոբանլուից արևմուտք՝ համապատասխանելով Ճարայի (պարսկ. Čahrik կամ Ćehrik) գավառին, որի կենտրոնը համանուն բերդն էր: Ի դեպ, այս վարչամիավորը հիշվում է նաև մեր կողմից արդեն հիշատակված Աղթամարի թեմական ցուցակում՝ «Աղթակ մինչ ի Ճարայու բերդն» պարբերությունում (հմմտ.՝ «Բայազետի բերդ» սանջակի անունը – Գ. Բ.)¹⁴²: Մեր կարծիքով, «ընդարձակ» ցուցակում արձանագրված է քննարկվող տեղանվան ասորական տարբերակը¹⁴³, մանավանդ եթե նկատի ունենանք հիշյալ տարածքում վաղ ժամանակներից ասորի հոծ բնակչության առկայության փաստը¹⁴⁴: Ավելի ուշ շրջանի սկզբնաղբյուրներից հայտնի է, որ քննարկվող սանջակը մինչև 19-րդ դ. առաջին քառորդը եղել է գրեթե ինքնավար՝ կառավարվելով Հաքարիի բեյերին ազգակից մի տոհմի կողմից¹⁴⁵:

Ավարտելով Վանի էյալեթի 1548-1555 թթ. վարչատարածքային կառուցվածքի նկարագրությունը, չպետք է մոռանալ նաև բեյլերբեյ-փաշայի անմիջական իրավասության ներքո գտնվող սանջակի (թրք. paşa sancağı) մասին: «Ընդարձակ» ցուցակում այս վարչամիավորը թեև որոշակիորեն նշված չէ, սակայն հայկական ձեռագրական հիշատակարաններում այն բավական հաճախ է հանդիպում «Երկիրս Վանայ» կամ «Վանայ երկիրն» անուններով¹⁴⁶: Ուշագրավ են նաև վարչամիավորի պատմական անունով հիշատակումները՝ «Երկիրս Վասպուրականի» կամ «յեկիրս Վանայ, զոր Վասպուրական կոչի»¹⁴⁷: Ավելին, Աղթամարի թեմին վերաբերող վավերագրում, որին արդեն անդրադարձել ենք, «վանա քաղաքն իւր նահանգով» պարբերությունը որոշակիորեն ցույց է տալիս վերջինիս նահանգային կենտրոն՝ փաշայանիստ, լինելը¹⁴⁸: Վանի էյալեթի՝ մեր կողմից քննարկված վարչամիավորների տեղադրության քննությունը ենթադրել է տալիս, որ սկզբնապես Վանի սանջակը ներառում էր միայն քաղաքն իր շրջակայքով (19-րդ դ. - 20-րդ դ. սկզբի հայկական սկզբնաղբյուրները, որպես կանոն, այն

¹⁴² Հաւաքարան, էջ 45. «յաղթակ մինչ ի Ճարայու բերդն» (պահպանել ենք բնագրի ուղղագրությունը): Հմմտ. Գարեգին Ա, էջ 191/192:

¹⁴³ Տեղանունը կարելի է կարդալ նաև Cevlani կամ Cevlanayi: Ընդ որում, ինչպես ցույց են տալիս որոշ փաստեր, -ni/ne/ կամ -nayı վերջավորությունը ասորերենում ունի տեղանվանակերտ ածանցի իմաստ՝ «գավառ» («Երկիր»)՝ նշանակությամբ լինմտ. Բրադոստ-ասոր.՝ Bradostnai, Բելիջան (Գյավառում)-Bilijayae, Դերի-Derrenaye կամ Dereni, Սարայ (Մահմուդի)-Saraine են: Տեղանունների ասորական ձևերը վերցրել ենք հետևյալ աղբյուրներից. Badger G. P., Nestorians and their Rituals, vol. 1, L., 1852, էջ 396, 398, 399. Percy, Highlands, „Map of Hakkiary”. Минорский В., Отчет о поездке в Макинское ханство.- „Материалы по изучению Востока”, выпуск 1, С-Петербург, 1909, էջ 24: Նշենք նաև, որ հիշյալ տեղանվան մեջ չենք բացառում սովորական արաբատառ գրության աղավաղումը, որը գալիս է արաբ. ض (ḍad) և ج (jim) տառերի բառասկզբում գրվող ձևերի՝ հաճախ հանդիպող շփոթից: Ըստ այդմ, սանջակի անունը կարելի է սրբագրել ضولانى - Zolani (իմա՝ «Ջուլայի երկիր» - Գ. Բ.): Ավելացնենք, որ «ընդարձակ» ցուցակում Արաղայի արաբատառ اباغابى աղավաղումը ենթադրել է տալիս اباغانى ուղիղ ձևը, ինչը դարձյալ կարող է տվյալ վարչամիավորի ասորերեն արտասանությունից բխող տարբերակը լինել, քանի որ պահպանված փաստերի հիման վրա Արաղան ժամանակին ունեցել է ասորի հոծ բնակչություն: Տե՛ս Շերենց Գ.: Սրբավայրեր: Տեղագրութիւն Վասպուրականի-Վանայ նահանգի գլխաւոր եկեղեցեաց, վանօրէից եւ ուսումնարանաց, Թիֆլիս, 1902, էջ 82:

¹⁴⁴ Միջնադարում Սալմաստը նեստորական եկեղեցու Նազլու-չայի առաջնորդության թեմերից էր: Տե՛ս Ֆրանգեան Ե., Ատրպատական, Թ., 1905, էջ 249-250: Ճարայում այժմ էլ պահպանվել են ասորական առանձին տեղանուններ (օր. Շնատալ):

¹⁴⁵ Хуршид-Эфенди, Сяхэт-намэ-и-худуд. Описание путешествия по турецко-персидской границе, С.-Петербург, 1877, էջ 306:

¹⁴⁶ ԺԷ-Բ, էջ 39, 66, 395: ԺԷ-Գ, էջ 109, 787: ՄՄ 6332, թ. 228բ, 246ա: Տե՛ս նաև «Մանր ժամանակագրություններ: XIII-XVIII դդ.», կազմեց Վ. Հակոբյան, հտ. 1, Ե., 1951, հտ. 2, 1956, էջ 66:

¹⁴⁷ ԺԷ-Գ, էջ 778: ՄՄ 4515, թ. 548, 639 («յաշխարհին Վասպուրական, որ Վան ասի»): ՄՄ 6332, 168բ, 266ա:

¹⁴⁸ Հաւաքարան, էջ 45: Վերոհիշյալ պարբերությունը տվել ենք բնագրի ուղղագրության համաձայն:

կոչում են «Վան-Sոսս» - Գ. Բ.), թերևս նաև Հայոց ծորի առանձին մասեր (տե՛ս Ոստանին նվիրված հատվածում): Հետագայում, սակայն, կենտրոնական սանջակի սահմանները զգալիորեն ընդարձակվեցին (տե՛ս համապատասխան տեղում):

Ինչպես տեսնում ենք, Վանի էյալեթի հարավն ավելի բարդ վարչատարածքային բաժանում ուներ: Տեղի սանջակները թվաքանակով գրեթե երկու անգամ գերազանցում էին հյուսիսայիններին, ինչը գերազանցապես պայմանավորված էր տարածքի լեռնոտ և կտրտված մակերևույթով: Այս հանգամանքը թույլ տվեց իշխող քրդական խոշոր տոհմերից առանձնացված շառավիղներին համեմատաբար ոչ մեծ տարածքի վրա ստեղծելու ժառանգական նոր տիրույթներ¹⁴⁹, որոնք բավական կենսունակ դուրս եկան և պահպանվեցին հետագա երեք հարյուրամյակների ընթացքում:

Ամփոփենք: Սկզբնապես (մինչև 1555 թ.) Վանի էյալեթն ունեցել է բավական ընդարձակ տարածք՝ ամբողջությամբ կամ մասամբ ընդգրկելով Մեծ Հայքի Վասպուրական, Մոկք, Տուրուբերան, Պարսկահայք, Կորճայք նահանգները, ինչպես նաև Աղծնիքի և Այրարատի հարավ-արևելքը: Ընդ որում, էյալեթի արևելյան սահմանը, փաստորեն, համընկնում էր նորաստեղծ քրդական իշխանությունների եզրասահմանին: Սակայն դա ժամանակավոր բնույթ էր կրում, և արդեն Ամասիայի հաշտության պայմանագրով եղան Վանի էյալեթի ընդգրկած տարածքը և սահմանները ենթարկվեցին լուրջ փոփոխությունների:

Гегам Мигранович Бадалян, Первичное административное деление Ванского эялета (1548-1555 гг.). Ванский эялет образовался в ходе турецко-персидских войн в 1548 г. и до 1555 г. занимал довольно обширную территорию. В состав эялета входили Мушская равнина (Тарон), Багешская провинция, бассейн Ванского озера, Мокк, Хаккиари, Артаз (Маку), Чвашрот (Чорс-Зияэддин), а также исторический Парскаайк. На севере границы Ванского эялета простирались до Араратской долины и Ширака или Шорагера. Фактически в новообразованную административную единицу полностью или частично были включены провинции исторической Великой Армении Васпуракан, Мокк, Туруберан, Парскаайк, Корчайк, Ахдзник и Айрарат. В намеченный период административно Ванский эялет состоял из более чем три десятка в основном – наследственных санджаков (оджаклыки или юрдлуки) и нескольких курдских хукюметов-княжеств (Битлис или Багеш, Хаккиари-Джуламерк, Хизан, Махмуди-Хошаб, Пиняныш). Сохранились также некоторые полунезависимые армянские княжества, меликства и автономные общины. Рельная власть ванского паши-бейлербея и османских мирлива-санджакбейов (управляющих уездов) распространялась лишь на некоторые прибрежные районы Ванского озера. Примечательно, что основная часть административных единиц Ванского эялета встречается и в армянских памятных записях 16-17 вв. - как правило со словосочетаниями «уезд» или «страна». После Амасийского мирного договора (1555 г.) восточные границы Ванского эялета значительно сократились и начали проходить водоразделом Васпараканских (Котурских) и Загросских гор.

Ключевые слова: Ванский эялет, санджак, лива, хукюмет, оджаклык, юрдлук, бейлербей (паша), мелик.

Gegham Mihran Badalyan, The preliminary administrative division of the Eyalet of Van (1548-1555). The Eyalet of Van was formed in 1548 during the Turkish-Persian wars and up to 1555 occupied a fairly large area. Its borders covered the Mush Plain, the Baghesh Province, the Lake Van Basin, Mokk, Region of Hakkari, Artaz (Maku), Chvashrot (Chors-Ziyaeddin) and the entire Parskahayk. In the north the borders of Eyalet reached the

¹⁴⁹ Տեղին է նշել, որ հարավային որոշ սանջակներ զբաղեցրել են խիստ սահմանափակ, փոքր տարածք (օրինակ Եղեգիս-Աղաքիսը, Բերդաղ-Մամուտանքը, Էրունը, Կառնին, Կարկառը ևն):

Ararat valley and Shirak (Shorager). Virtually, it completely or partly included Vaspurakan, Mokq, Turuberan, Parskahayk, Korchayk provinces of Great Armenia, as well as the eastern part of Aghdznik and south-east of Ayrarat. The Eyalet of Van as a military-feudal administrative unit had a rather stable and unchanging internal administrative structure, consisting of more than three dozens of hereditary sanjaks (Ocaklik or Yurdluk as a rule), as well as of the semi-independent Kurdish hukumet-principalities (Bitlis or Baghesh, Khizan, Hakkari-Julamerk, Mahmudi-Khoshab, Pinyanish). There were also a number of Armenian semi-independent principalities, melikdoms and other autonomies. The real power of Van Beylerbey (Pasha) and Ottoman Heads of Liwas or Sanjak-Beyis extended only over separate, mainly the coastal sanjaks of Lake Van. It is noteworthy that the majority of the administrative units of the Eyalet of Van are mentioned also in the colophons of the Armenian manuscripts of the 16th-17th cc., as a rule, linked to the phrases of "country" or "canton". However, according to the 1555 Amasia Peace Treaty, the eastern borders of the Eyalet of Van were significantly reduced, stretching through the watersheds of the Vaspurakan (Kotur) and Zagros mountains.

Key words: Van eyalet, sanjak, liva, hukyumet, ojaklik, yurdluk, beylerbey (pasha), melik.